

362

U-97

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ

Ա. ՏԵՏՐ

ՎԵՐԱԲԱՆԱԿԱՆ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
1916

362
U-97

Հ. Ր. Ա. Մ. Ա. Ն. Ա. Ի.
Տ. Տ. Գ. Է. Ո. Ր. Գ. Ե.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



4722-55

Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը Նորին Վե-
հափառութիւն Ամենայն Հայոց Սրբազնագոյն Պաթոզիկոսի բարձր հրա-
մանով և 1915 թուի մարտ 1-3-ին Ս. Էջմիածնում զուգարուած համա-
ժողովի ցանկութեամբ ձեռնարկելով «Տեղեկատու»-ի հրատարակութեան,
մտադիր է զրքոյկներով հետզհետէ հանուր հայ ազգի հայեցողութեան
մատչելի դարձնել պատերազմի աղէտից տառապած հայ փախստականների
վիճակն ու կացութիւնը և տեղեկութիւն տալ հասարակութեան իւր
գործունէութեան և ապագայ այն անելիքների մասին, որոնցով հնարաւոր
է զաղթականների քաշած դառնութիւնն ու վիշտը սակաւ մի ամօքել և
նրանց ապագայ տնտեսութիւնը մայրենի երկրում վերականգնել:

«Տեղեկատուն» պարունակելու է նաև փախստականներին վերաբե-
րեալ ամեն տեսակի վիճակագրական տեղեկութիւններ, մա-
նաւանդ Յանձնաժողովի և ճիւղերի ստացած դրամական և
այլ նպաստների ու նրանց գործադրութեան հաշիւներ:

24 մարտի 1916 թ.

Ս. Էջմիածին

ԿՈՆԴԱԿՔ

ՆՈՐԻՆ ՎԵՅԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա.

ԳԻՈՐԳ. ԾԱՌԱՅ ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ
Եպիսկոպոսապետ Եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական նախամեծար Աթոռոյ Առաւեսեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կա-
թողիկէ Էջմիածնի.

Գերապատիւ Տ. Եփրեմ, Տ. Բագրատ, Տ. Մատթէոս Եպիսկոպոսաց և բարձրապատիւ Տ.
Գարեգին, Տ. Բարդէն և Տ. Վրթանէս վարդապետաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն
և օրհնութիւն Հայրապետական:

Նարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ զողբս և զաղբալիս անօգնական և անպաշտպան
սիրելի զաւակացս Գիտէք արդէն, զի ի վերջին ատուրս յանկարծակի թշուառութիւնք և սոսկալի
արհաւիրք եկին հասին ի վերայ զաւակացս, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս և զամենայն
ստացուածս իւրեանց ի Տաճկա-Հայաստանի և յԱտրպատականի, սարսափահար և խելակորոյս լեալ,
փախեան ի սահմանս մեր և այսօր հազարաւոր թշուառ կանայք և անմեղ մանկունք և ծերք,
ժողովեալք աստ ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրին ի Մէնջ զօգնութիւն:

Ցանկացեալ Մեր ընդ փոյթ հասանել յօգնութիւն արկածելոց, դիմեցաք առ պարտաճանաչ
հոգևոր որդիս մեր, յորոց ոմանք շարժեալ մարդասիրական և յեղբայրասիրական վեհ զգացմանց,
ազնուարար արկին զլուսայս իւրեանց յաղգային գանձանակ վասն փրկելոյ զկեանս արկածելոց և
սառապելոց:

Արդ՝ անհրաժեշտ համարելով զկազմակերպումն քրիստոնէական օգնութեան վասն հազարա-
ւոր զաւակացս, այսու Հայրապետական Կոնդակաւո նշանակեմք զՋեղ անդամս Կարգադիր Յանձ-
նաժողովոյ Եղբայրական Օգնութեան ընդ անմիջական հսկողութեամբ և անօրէնութեամբ Մերով
և պատուէր տամք Ձեզ կատարել զյետադայս.

Ա) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւնս զհայ զաղթականաց, որք ի պատճառս
Ռուս-Տաճկական պատերազմի, թողեալ են գտունս և զստացուածս իւրեանց և գտանին ի թշուառ
կացութեան, ցրուեալք յայլ տեղիս:

Բ) Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացուցչաց և վստահելի անձանց զվրձակ նոցա և
զհետեանացն յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն:

Գ) Մտանել ի բանակցութիւն ընդ Յանձնաժողովս Եղբայրական Օգնութեան, հաստատելս
Կոնդակօք Մերովք ի զանազան քաղաքս, տալով նոցա զկարևոր տեղեկութիւնս վասն զաղթակա-
նաց և խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի զխտութիւն:

Դ) Միաւորել զգործունէութիւնս ամենայն Յանձնաժողովոց Եղբայրական օգնութեան և,
ի գէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մէնջ զկարևոր հրահանգս, հրաւիրել աստ ի
Ս. Էջմիածին զներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ սկզբունս գործունէ-
ութեան յօգուտ զաղթականաց:

Ե) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս մերձակայ քաղաքաց և սահմանադրուիս

Զամենայն նուէրս դրամոց առաքել ի ս. Էջմիածին յանուն Սինոդի, իսկ զհանգերձեղէնս աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ և բնակեցուցանելոյ զգաղթականս ի շրջակայ գիւղօրայս, յայսմ ցրտագին եղանակի:

Զ) Խնամել ըստ ամենայնի և տալ նոցա զբժշկական օգնութիւնս, սիրով և մխիթարել զնոսա հոգեպէս:

Է) Ստանալ ի Սինոդէ Ս. Էջմիածնի զժառարկեալ մատենս և պահել զամենայն հաշիւ կանոնաւորութեամբ և կանխագոյն թոյլտուութեամբ Մերով ստանալ ի գանձապահէ Մայր Աթոռոյ զանհրաժեշտ զբամս ի նուիրատուութեանց յօգուտ գաղթականաց:

Լիայոյս եմք, զի Դուք, որդեակք հոգեորք, առաջի աչաց ունելով զողբալի և զյուսահատ վիճակ և զսոսկալի տառապանս գաղթականաց մերոց, զործեսջիք ամենայն եռանդեամբ և անձնուիրութեամբ ի թեթևացումն ազգային ազէտից:

Լիայոյս եմք նոյնպէս, զի գերապատիւ Առաջնորդք, Յանձնաժողովք եղբայրական Օգնութեան, ազգային գործիչք մեր, բարեգործք և կարողաւորք յամենայն կողմանց փութով օժանդակեցին նուիրատուութեամբք իւրեանց վասն գծրազգ գաղթականաց մերոց:

Ազգութեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց: Ազգութեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց: Ազգութեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց:

Ազգութեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց:

Ի վերայ իսկականին ստորագր.

ՊԵՌՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 28 դեկտեմբերի 1914 ամի

ըստ տոմարի ՌՅԿԴ

Ի Հայրապետութեան Մերում Գ. ամի
Սարգստեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.

Ի Վաղարշապատ.

Թ. 1990:

Բ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԳԵՌՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ
Եպիսկոպոսապէս եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կա-
թողիկէ Էջմիածնի.

Գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց . . . հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ . . . ող-
ջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Քաջայայտ է Ձեզ, զի ի վերջին աւուրս ահաբեկումն, թշուառութիւնք և սոսկալի արհաւիրք
եկին, հասին ի վերայ տարաբաղդ գաւակացս, յորոց յոյժ բազումք թողեալ զհայրենի տունս և
զամենայն ստացուածս իւրեանց ի Տաճկա-Հայաստանի և յԱտրպատականի, սարսափահար և խե-
լակորոյս լեալ, ապաւինեցան ի սահմանս մեր և այժմ հազարաւոր թշուառ կանայք և անմեղ
մանկուհիք, ծերք և հիւանդք, ժողովեալք աստ ի ս. Էջմիածին և ի շրջակայ գիւղօրայս և ի վա-
ւաստ, խնդրեն ի Մէնջ և յազգայնոց մերոց զօգնութիւն:

Ի նկատի առեալ Մեր գայս ազէտալի հանգամանս, ի յրումն Կոնգալի Մերոյ ի 20 նոյեմբերի
անցելոյ 1914 ամի, այսու Հայրապետական Կոնգալաւս յանձնարարեմք Կերապատութեանդ՝ փութ-
թով յորդորել զՅանձնաժողովս և զՄասնախումբս եղբայրական Օգնութեան, զԱստուածահաճոյ
լնկերութիւնս, զազգային հաստատութիւնս և զբարեգործ անձինս՝ մասնակից լինել և օժանդա-
կել լիառատ նուիրաբերութեամբ իւրեանց, զի մարթապոք խնամել և պահպանել զգաղթականս
յայսմ ցրտաշունչ եղանակի, կերակրելով զչքաւորս ի սոցանէ և բժշկելով զհիւանդս, թիւ որոց
բազում է յոյժ:

յանուն Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովոյ Մայր Աթոռոյս և զառաքմանէն յայտ առնել Մեզ ի
զիտութիւն և ի անօրէնութիւն:

Լիայոյս եմք, զի Դուք, առաջի աչաց ունելով զսոսկալի տառապանս և զյուսահատ կացու-
թիւն գաղթականաց մերոց, ամենայն եռանդեամբ զործեսջիք յօգուտ տարաբաղդ գաւակացս ի
թեթևացումն տանջանաց և ի սփոփումն վշտից սոցա:

Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողով եղբայրական Օգնութեան ս. Էջմիածնի, որ ընդ հովա-
նաւորութեամբ և հսկողութեամբ Մերով գործէ, ունի հրատարակել կանոնաւորութեամբ զամենայն
հաշիւս նուիրատուութեանց և ծախուց:

Օրհնելով զՁեզ և զհայ ժողովուրդն թեմին Ձերոյ, ազգութեմք առ Աստուած վասն փրկելոյ
զազգն Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց ժամանակիս:

Ազգութեմք, զօրացեալ շնորհօք ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Ի վերայ իսկականին ստորագր.

ՊԵՌՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 12 յունւարի 1915 ամի

ըստ տոմարի ՌՅԿԴ

Ի Հայրապետութեան Մերում Դ. ամի
Սարգստեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.

Ի Վաղարշապատ

Թ. 65

Գ.

ՀԱՆՐԱԿԱՆ

ԳԵՌՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ
Եպիսկոպոսապէս եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կա-
թողիկէ Էջմիածնի.

ԳԵՐԱՊԱՍԻԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ԲԱՐՁՐԱՊԱՍԻԻ ՓՈԽԱՆՈՐԴԱՅ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԱՅ,
ԱՐԺԱՆԱՊԱՍԻԻ ԱՒԱԳ ԵՐԻՅԱՆՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ԲԱՐԵՋԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՅ,
ՎԱՐՁՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՅ ԵԿԵՂԵՅԵԱՅ ՀԱՅՈՑ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՀԱ-
ՃՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՄԻՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈ-
ՎՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ, ԺՐԱՋԱՆ ՈՒՍՈՒՅՉԱՅ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾ ԱՆՁԱՆՅ ԵՒ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՈՐԴՈՑՍ ՅԻՍՈՒՍԱՆԴ ՈՂՋՈՑՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Արդէն իսկ քաջայայտ են ամենեցուն դառն կացութիւն և դժուարակիր պայմանք փախստա-
կան գաղթականաց մերոց, որք զինի սոսկալի տանջանաց և զրկանաց, հասին ի սահմանս մեր և
այժմ Յանձնաժողովք և Հաստատութիւնք, Աստուածահաճոյ Ընկերութիւնք և Միութիւնք, հասա-
րակական գործիչք և բարեսէր անձինք և մանաւանդ զիւզական ժողովուրդն Հայոց օգնեն և օժան-
դակեն բազմաչար գաւակաց Մերոց, ըստ օրինակի ողորմած սամարացւոյն:

Գոհունակութեամբ տեսնեմք յամենայն տեղիս զեռանդակն գործ եղբայրական օգնու-
թեան, որ մխիթարութիւն է սրտի Մերում և պատիւ Հայ ժողովրդեան:

Ի նկատ տեսալ զօգուտն փախստական-գաղթական գաւակաց Մերոց և ցանկացեալ Մեր կա-
նոնաւորել զգործ օգնութեան ի գիւղօրայս և ի քաղաքս Կովկասու՝ համաչափ բաշխմամբ նպաս-
տից, կազմակերպել յատկապէս զվերադարձ փախստական-գաղթականաց ի Հայաստան և բարեու-
քել զանասեութիւն և զերկրադործութիւն ի բնակավայրս նոցա, Մեք անհրաժեշտ վարկաք հրա-

Լիբիլ զարգացմանը Զանձնաժողովոյ և Միութեանց, Ընկերութեանց և Հաստատութեանց ի Ս. Էջմիածին, ի 1-ն մարտ ամսոյ, վասն խորհրդակցելոյ աստ՝ ընդ հովանաւորութեամբ և անմիջական հսկողութեամբ Մերով՝ յազապ յիշեալ կարեւոր խնդրոց:

Համաժողովն, զինի լսելոյ զմասնական գեղեցեղանի և զվիճակաւորական տեղեկագիրս ներկայացուցչաց, խորհելով և կողմնելով զնախաճաշիս վասն պահպանութեան և վերադարձի փախստական զաղթականաց և վասն բարեկաման գիւղական տնտեսութեան նոցա, մատուց Մեզ ի տնօրէնութիւն զարձանագրութիւնս և գեղեցեղանիութիւնս իւր:

Ըստ ամենայնի հաճ և հաւան գտեալ ընդ եղբայրացութիւնս համաժողովոյն, Մեր հաստատեցաք աստ ի Ս. Էջմիածին ընդ հովանաւորութեամբ և հսկողութեամբ Մերով զկենտրոնական մարմին՝ զԳլխաւոր Կարգադիր Զանձնաժողով Նղբայրական Օգնութեան, յանդամակցութիւն որոյ հրաւիրեցաք զչորս ներկայացուցիչս ի Զանձնաժողովոյ Նղբայրական Օգնութեան Մայր Աթոռոյս, հրաւիրեցաք զչորս ներկայացուցիչս ի Թեմական Կենտրոնական Զանձնաժողովոյ Երևանայ, զերկուս ի Կենտրոնական ներկայացուցիչս ի Կովկասեան Բարեգործական, Նպաստամատուց, ի Գիւղատնտեսական Ընդհանրական Զանձնաժողովոյ, ի Կովկասեան Հողերականաց և Ծխական Հողարարութեանց Թիֆլիզի, կենտրոնաց և ի Զանձնաժողովոյ Հոգեւորականաց և Ծխական Հողարարութեանց Թիֆլիզի, մինն՝ ի Զանձնաժողովոյ Հայոց, ի Մարգարեական Ընկերութեան և ի Կուլտուրական Միութեան Հայոց Բաղուայ, զմինն՝ ի Զանձնաժողովոյ, յեկեղեցական Հողարարութեան և ի Բարեգործական Ընկերութեան Հայոց Նորոյ Նախիջևանի, զմինն՝ ի Զանձնաժողովոյ Մոսկուայի և զմինն՝ ի Զանձնաժողովոյ և ի Սորհրդոյ Եկեղեցեաց Հայոց Պետրոպոլիս:

Բաց յայսմանէ տուաք իրաւունս անդամոց Զանձնաժողովոյ և Կողմակերպութեանց Հայոց ամենայն քաղաքաց, որք գործեն վասն փախստական գաղթականաց Մերոց, ի գէպս ներկայութեան նոցա ի Ս. Էջմիածին, մասնակից լինել ի խորհրդակցութիւնս Գլխաւոր Կարգադիր Զանձնաժողովոյս:

Տալով գիտել Ձեզ ամենեցուն զհաստատութեան Գլխաւոր Կարգադիր Զանձնաժողովոյս Նղբայրական Օգնութեան, այստ Հայրապետական Կոնդակուս հրաւիրեմք և յորդորեմք զՁեզ, որք անկը հոգեւորք և սիրելիք, յայսմ պատմական վայրկենի աղգային կինաց մերոց, գործիլ և աշխատ լինել համերաշխութեամբ, բարեգործական ոգեւոյ և ազգասիրական եռանդեամբ յողում փախստական գաղթականաց մերոց և փութով օգնել Մեզ լիառատ նուիրարութեամբք ձերովք, զի ի ձեռն Գլխաւոր Կարգադիր Զանձնաժողովոյ Ս. Էջմիածին, որ ըստ որոշման Համաժողովոյ է գեղաւարտ աղգային մարմին ընդ հովանաւորութեամբ և հսկողութեամբ Մերով, և ի ձեռն ամենայն տեղական Զանձնաժողովոյ և Ընկերութեանց, մարթացուք ի կատար անել զհաստատուալս ի Մէնջ գեղեցեղանի Զանձնաժողովոյն՝ վասն պահպանութեան, վերադարձի գաղթականաց մերոց ի հայրենիս իւրեանց և վասն վերահաստատելոյ անդ գրայրայեալ տնտեսութիւնս և զգիւղորայս նոցա:

Լիայոյս եմք, զի ամենայն պարտաճանաչ և զիտակից աղգայինք մեր սրտեռանդն ոգեւոյ օգնեցեն նիւթապէս և բարոյապէս վասն շինարար և փրկարար գործունէութեանս այսորիկ՝ յօղում և ի փրկութիւն փախստական գաղթականաց մերոց:

Օրհնելով զամենեւեմ, մաղթեմք ի Տեառնէ պահպանել զձեզ ընդ հովանեալ Աջոյ Իւրոյ՝ փրկել զազգն Հայոց ի փորձութեանց և ի թշնամեաց և պարգեհել Հայաստան երկրի զխաղաղութիւն և զբարգաւաճումն կատարեալ:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Ի վերայ իսկականից ստորագր.

Գ. Ն. Ռ. Պ. Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 21-ն մարտի 1915 ամի

Ըստ տոմարիս Ռ. 347

Ի Հայրապետութեան Մերում Դ. ամի

Սկզբնական Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ի վաղաբաւական

Թ. 462

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԷՋ ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ.

Ա.

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

Ա. ՌՈՒՍՍՍԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՎԵՀԱՓԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌՔ ԱՌԱՋ ՄԻՋՆԵՐԸ:

Համաերոպական պատերազմի ժամանակ Տաճկաստանը թէև չէր քրտնաթիւն յայտարարեց, բայց անպաշտօն կերպով ռազմական պատրաստութիւններ էր անհետում, որի համար իւր հպատակ ժողովրդից, մանաւանդ հայերից, սկսել էր թէ գինուր ժողովել և թէ զօրքի համար անհրաժեշտ ուսեստի պաշարներ. այս պաշարահաւաքումի անուան տակ տաճիկ կառավարութեան պաշտօնեաները բացարձակ թալան էին անում հայաւնակ գիւղերում՝ խլելով նոցանից ուսեստի համարեա ամբողջ պաշարը, անասուններն ու անասունների կերը—խոտ ու դարմանը: Լուրեր էին հասնում Վեհափառ Հայրապետին, որ հայ ժողովրդի զրութիւնը հետզհետէ անտանելի է դառնում. պետական պաշարահաւաքումին աւելացել են քիւրդական հրոսակաւորների արշաւանքներն ու թալանը. տեղ տեղ ժողովուրդը ստիպուած է եղել պատսպարուել լեռներում:

Վեհափառ Հայրապետը սահմանամերձ հայերի զրութիւնը բարեբերու և տեղումը օգնութեան գործը կազմակերպելու համար նոյեմբերի 7-ին № 1719 գրութեամբ գիմեց Կովկասի Տ. Փոխարքային թոյլտուութիւն խնդրելով ժողովարարութեան, որ կարողանայ այդ թշուառութիւնները գէթ մասամբ դարմանել:

Ժողովարարութեան թոյլտուութիւնն ստանալով նոյն ամսի 12-ին, Նորին Սրբութիւնը նոյեմբերի 20-ին № № 1767—1772 սրբատառ կոնդակներով յանուն թեմակալ առաջնորդների պատուիրում է կազմակերպել Նղբայրական Օգնութեան Զանձնաժողովներ, նուիրատուութիւններ ժողովել սահմանամերձ տաճկահայերին օգնութիւն հասցնելու համար:

Ռուս-Տաճկական պատերազմն սկսուելով թէև Ռուսական յաղթական զօրքը մտաւ Բայազիդի, Ալաշկերտի և Բասենի հովիտը, որին հայ ժողովուրդը ցնծագին ընդունելութիւն ցոյց տուեց և յոյս ունէր ազատ շունչ քաշել. սակայն նորա գրութիւնը չբարեբերեց, իսկ Քեօփրիքոյի աղէտալի գէպքից յետոյ՝ այն կողմերի հայերի զրութիւնն անտանելի դարձաւ, որովհետև մուսուլման աղագրականութիւնը, մանաւանդ քիւրդ համիդեականներն սկսեցին բացարձակօրէն նեղել հայերին, աւերել նոցա տները, առեանդել հարսներին և աղջիկներին, թալանել նոցա ստացուածքը և հարկադրել գաղթել գէպի հիւսիս—Ռուսաց սահմանը:

Որովհետև Ռուսաստանի հայաբնակ գլխաւոր կենտրոններում արդէն կազմակերպուած էին Նղբայրական Օգնութեան Զանձնաժողովներ և թէ զբամով, թէ հագուստեղէնով ժողովարարութիւնն սկսուած էր, Նորին Սրբութիւնը Քարեհաճեց կազմել մի յանձնախումբ գլխաւորութեամբ Վեհապետիւ տ. Մեսրոպ և տ. Սրբէն եպիսկոպոսների և մասնակցութեամբ պ. պ. Յովհաննէս Թուրմանեանի, Յովսէփ Սունունցի, Շիրվանզադէի և Սմբատ Սաչաւորեանի, որոնք անձամբ շրջելով Տաճկաստանի Ռուսաց տիրապետութեան տակ անցած հայաբնակ գիւղերը, պէտք է ուսումնասիրէին նոցա տնտեսական զրութիւնը:

Ներկայացրած գեղեցմից երևում է, որ բոլոր հայաբնակ գիւղերը, նախքան Ռուսաց զօրքի մուտք գործելը, քիւրդերն ու տաճկական զօրքերը թալանել և քաշուել են երկրի խորքը:

Նորին Սրբութիւնն այս տեղեկութիւնների հիման վերայ գեղեցմերի կիսերին կարգադրութիւններ է անում բուն երկրում եղբայրական օգնութեան գործը կազմակերպել և ստացած նպաստներն հասցնել թշուառացած ժողովրդին, սակայն նոյն ամսի 20—22-ի Սարիղամիշի մեծ ճակատամարտի պատճառով Աւրպատականի և Ալաշկերտի հովտի Ռուսական զօրքը յետ նա-

հանջեց, որի հետևանքն հղաւ նաև այդ երկրներէի հայ ժողովրդի ամբողջական դադլթը դէսլի Ռուսաստան:

Բ. ԳԱՂԹԱԿԱՆՆԱԿԱՆ ՀՈՍՍԱՆՔ ԵՒ ՍՈՅԱ ՊԱՏՊԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ:

Դեռ մինչև ղեկավարների 20-ը հեռագիրները գուժիկ էին Նորին Սրբութեան Արդուհանի, Օլթիի և Արդահանի աւերումների լուրը, որտեղներից հայ և այլ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը սարսափահար, ամեն ինչից զուրկ, փախչելով անցել էր Բաթում, Ախալցխա, Ախալքալաք և Ալեքսանդրապոլ, իսկ ղեկավարների 20-ից սկսում են տեւալուր, իսկ հեռագիրները Զուլֆայից, Իզդերից, Կարսից, զաւ հեռագիրները Զուլֆայից, Իզդերից, Կարսից, որոնք յայտնում էին տասնեակ հազարաւոր զաւթական-փախստականների սահմանն անցնելու լուրը:

[illegible]

Քանի որ գաղթականները մեծագոյն մասն
անցնելու էր Իզմիրի վերայով, այդ պատճառով
Նորին Սրբութեան հրամանով Երևանի փոխ-թե-
մակալն անձամբ զնաց Իզմիր տեղումը ծանո-
թանալու գաղթականների քանակի և նոցա դրու-
թան հետ և կազմելու այնտեղ եղբայրական Օգ-
նութեան Յանձնաժողով:

Ինչպէս երեւում է տեղեկագրից, բոլոր տեղերում տեղական եղբայրական Օգնութեան Յանձնաժողովները կազմուել են փոխանորդների և քահանաների հախաբաժնութեամբ և մասնակցութեամբ տեղական ինտելիգենտ և եռանդուն անձերի:

անձերի՝
Որովհետև գաղթականներն անցնելով սահ-
մանը իգգիբրի վերայով պիտի գային էջմիածին,
որ մէկ օրից աւելի պիտի տւէր, ուստի Երևանի
Յանձնաժողովը կարգադրել էր սննդատու կայան
Մարգարա գիւղում. այդ պատճառով
հիմնել Վհհաիւտ Հայրապետի պատուէրով մեկնեց իգ-
գիբրի և Մարգարա բարձրապատիւ Գարգին վար-

գապիտը գաղթականներին լիովնագրելու դործը կազմակերպելու համար, իսկ Մարգարայում սննդատու կախանը կառավարելու համար զնաց բարձրապատիւ Արիստակէս վարդապետը, որ օգնական ունէր Մարգարապատի դործակալին, Երեւանից ուղարկած մի քանի պարոնները և Ճեմաբանի մի քանի ուսանողները:

Գ. ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Ռուսաց սահմանն անցած գաղթական-փախստականները, որոնց թիւը տասնեակ հազարներով է հաշոււմ, չափազանց եղկելի էր և սրտաճմլիկ։ Ռուսաց զօրքի անակնկալ յետ նահանջը և կէս գիշերին լուր ստանալը, որ իրենք անպաշտպան են մնալու, ուրեմն պէտք է փախչել, այնպիսի խուճապ է ստեղծում զիւղերում, որ շատերը չեն կարողանում տոյնիսկ կանոնաւոր կերպով հագնուել, ուր մնաց թէ իրենց ստացուածքի մասին հոգալ, սոսկալի սառնամանիքներին հազարաւոր բազմութիւնը, որը սալլով, որը անասունի վերայ նստած, որը ոտքով ճանապարհ է ընկնում միայն իւր կեանքը փրկելու և բարբարոս քիւրքերի ձեռքը չընկելու համար։ Սակայն քիւրքերի թաւանի պակասը լրացնում է սառնամանիքը. նոքա, որոնք յաջողել էին իրենց հետ վերցնել տաւար, տան կահկարասի, ճանապարհին ստիպուած են լինում ձգել և դատարկաձեռն անցնել. մահացութեան բաւական շատ դէպքեր է պատահել ճանապարհին, սառել և ճանապարհին են մնացել մատաղահաս աղջիկներ, անչափահաս երեխաներ, իսկ կենդանի մնացած և սահմանն անցած փախստականների մէջ հարիւրներով էին ձեռքի և ոտքի ցրտահարութեան դէպքերը։

Մեծ մասամբ ծերեր և կանայք, աղջիկներ ու երեխաներ ցնցոտիների մէջ, հազիւ մերկու-թիւնը ծածկած, ոտաւորեկ, նոքա ցուրտ ձմրան համարեա ոտքով օրերով գնում էին ուժասպառ և հիւանդ։ Ս. էջմիածին հասած զաղթահաններից մօտ 500-ի ձեռքի կամ ոտքի մատները ցուրտը տարած էր, իսկ հիւանդների թիւը՝ էլ աւելի շատ։

Գաղթականների պատմածը, տեղական ու սուցիչների նկարագրութիւնն և հէնց նոցա տեսքն ու հագուստը կասկած չէին թողնում, որ Բայազիտի, Ալաշկերտի և Բասենի մօտ 32 գիւղերի հայերը քամել են զառնութեան մրուրը, որ այդ մի ժամանակ շէն երկիրը աւերուել է, իսկ նորա բնակչութիւնը վերջին ծայր թշուառացել, հիւ-ծուել ու տանջուել, որ երկրում և ճանապարհ հին կորցնելով ամեն ինչ, իւր անձր փրկելով եկել

է իւր ռուսահայ եղբայրակիցներէ մօտ, յոյսը
դնելով նոցա մարդասիրութեան վերայ:

Դ. ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ ԿԱՐ-
ԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նորին Սրբութիւնը նկատելով որ գաղթականական հոսանքը մեծ չափեր է ընդունում և նորան խնամելու, պահպանելու գործը բաղձատեսակ դառնում, իսկ եղբայրական Օգնութեան Յանձնաժողովները գործելով իրենց շրջանի գաղթականների համար կարող են տարբեր գործերակերպ ընդունել և օրգանապէս կապուած չլինելով՝ ժողովրդեան նուէրները կարող են անհաւասար չափով ծախսուել, բարւոք համարեց անցեալ դեկտեմբերի 28-ին № 1990 սրբատառ կոնգակով Ս. Էջմիածնում իւր անմիջական բարձր հովանաւորութեան ներքոյ մի Յանձնաժողով կարգել, որը բոլոր եղբայրական Օգնութեան Յանձնաժողովներին միացնող և կապող օղակը պիտի լինէր և

Ի. ԳԼԽԱԽՈՐ ԿԱՐԳԱԳԻՐ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ
ԷԶՄԻԱԺՆԻ ԳԱՆԱՌՈՒՄ.

1. ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԿԵՐԱԿՐԵԼՆ ԵՒ ԳԻՒՂՔՐՆ ՈՒ ԵՐԵՒԱՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ.

Համաձայն Վեհափառ Հարապետի կոնդակի զ. կէտի, Յանձնաժողովս պարտաւորութիւն ունէր էջմիածնի դաւառը մտած գաղթականների հոգսը քաշել. այդ պատճառով, ինչպէս վերն ասուեց, Գարեգին վարդապետն ուղարկուեց իգգիր տեղափոխութեան գործը կարգաւորելու և Մարգարա գիւղում սննդատու կայանը կանոնաւոր հիմքի վերայ դնելու։ Համաձայն նախնական որոշման պէտք է իգգիրից ճանապարհուէին դէպի Մարգարա և էջմիածին փոքր խմբերով 2—300 հոգուց բաղկացած, որպէս զի կարելի լինէր նոցա բնակարանի և սննդի ու ճանապարհ դնելու մասին հոգալ. սակայն այդ որոշումն անհնարին եղաւ ի կատար ածել, որովհետեւ գաղթականական հոսանքը սկսուեց մեծ խմբերով. գեկտեմբերի 27-ին տեղս հասան մօտ 100, 28-ին մօտ 300 հոգի, բայց 29-ից մինչև յունուարի 5-ը եկւորներ թիւը եռապատկուեց, քառապատկուեց. գալլիս էին գիշեր և ցերեկ անընդհատ։ Յանձնաժողովս իրեն աջակից ունենալով Վաղարշապատի հասարակութիւնից ընտրուած Մասնաժողովին և Ճեմարանի բարձր դասարանի սաներին և ուսանողներին, եկող գաղթականներին տեղաւորում էր

միլիտամանակ էջմիաճնի գաւառում գտնուած
գաղթականներին խնամողը հանդիսանալը:

Յիշեալ կոնդակով այդ Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին, որ բաղկացած էր Նփրեմ, Բազբառ և Մատթէոս եպիսկոպոսներից և Գարեգին, Բաբգէն և Վրթանէս վարդապետներից, տրուած է հետեւեալ հրահանգը. ա) ի մի ժողովել հայ գաղթականների մասին բոլոր տեղեկութիւնները. բ) գաղթականների վիճակը քննել և զեկուցանել. գ) բոլոր նշխարական Օգնութեան Յանձնաժողովներին հետ բանակցութեան մէջ մտնել, ստանալ տեղեկագրեր և գաղթականների մասին տեղեկութիւններ տալ նոցա. դ) նշխարական Օգնութեան բոլոր Յանձնաժողովների գործունէութիւնը միաւորել և հարկ եղած դէպքում նոցաներկայացուցիչներից համագումար կազմել, ե) խորհրդակցել մերձակայ Յանձնաժողովների հետ գիւղերում գաղթականներ տեղաւորելու մասին և զ) խնամել գաղթականներին և բժշկական օգնութիւն հասցնել:

գորանոցում, ծխական և պետական գաղութներին շէնքերում, մասնաւոր դատարկ տներում, էջմի-
ածնապատկան դատարկ խանութներում, Մայր Ա-
թոռի ագարակի մի մասում (միւս մասը բռնել էին
ռուսաց զօրքերը) և միաբանական սեղանատանը:
Որովհետեւ գալիս էին գաղթականներն անընդհատ
և առանց կանխապէս ի գգիւրից կամ Մարգարայից
նոցա գալու մասին տեղեկութիւն տալու, սկզբի օ-
րերում մի քանի գէպք տեղի ունեցաւ, որ ուշ գի-
շեր սայլերով եկած գաղթականներ ստիպուած
էին հղել գիշերել բացօթեայ, կամ ցիխի պատ-
ճառով չկարողանալով գալ Վաղարշապատ, հէնց
ճանապարհին էին մնացել. եղան նաև գէպքեր,
որ Սև ջրի մօտերքը հասած գաղթականներն
ուժասպառ, սակարող լինելով այլևս քայլել, մնա-
ցել էին ցիխերի մէջ և հարկադրուած ենք եղել
զօրքերի ագարակում գտնուած սայլերը խնդրել,
որ դնան և տեղ հասցնեն նոցա: Թէև որոշուած
էր գաղթականներին ընդունել էջմիածնում և մի,
երկու օր հանգիստ տալուց ու կերակրելուց յետոյ
ուղարկել շրջակայ գիւղերը կամ Երևան, սակայն
այդ անհնարին եղաւ իրագործել՝ ա) որովհետեւ
ոստիկանական իշխանութիւնը հրաման ունէր նա-
խապէս ցուցակագրել գաղթականներին, ապա թէ
թոյլ տալ գիւղ կամ քաղաք դնալ, բ) որովհետեւ շատ
շատերը սպասում էին իրենց ընտանիքի միւս
անդամների տեղս հասնելուն, որոնց ճանապարհ

հին կորցրել էին և գ) որովհետև մեծ մասը պառաւ, ծեր, անօգնական կանայք, աղջիկներ և երեխաներ լինելով, կարօտ էին աւելի երկար խնամքի, չհաշուելով այն ցրտատար և հլւանդ երեխաներին և մեծերին, որոնց որոշուած էր պահել իջմիտածնում և խնամել մինչև ասպաքինումն:

Յանձնաժողովս տեսնելով որ գաղթականա-
կան հոսանքը մեծ չափեր ընդունեց և եթէ օր
առաջ նոցա փոխադրութեան գործը չկարգաւո-
րուի, տեղ չի լինիլ պատասպարելու նոր եկողներին,
դիմումն արեց Երևանի նահանգապետին չցուցա-
կազրել գաղթականներին, այլ այդ գործողու-
թիւնը կատարել տեղումը, երբ գաղթականները
տեղաւորուած կլինեն գիւղերում: Ստանալով
թոյլտւութիւն, ձեռնարկուեց գաղթականների
տեղափոխութեան գործին: Մինչև յունուարի 1-ը
էջմիարժնում գաղթականների թիւը 7—8000-ի
հասաւ: Թէև քաղաքական իշխանութեան կար-
գադրութեամբ Վաղարշապատի բոլոր փոքրին
պատուիրուած էր հացը տալ միայն Յանձնաժո-
ղովի գաղթականների համար, սակայն այդ բա-
ւական լինել չէր կարող, ուստի ամենայն օր
յանձնարարուեց Երևանի Թեմական Յանձնաժո-
ղովին ուղարկել 200—300 փութ հաց, որ հաղլու
էր բաւականացնում գաղթականներին:

Ի նկատի ունենալով, որ միայն ցամաք հաս-
ցը բաւարար մնունէ չէ յոգնած և տանջուած
գաղթականներին համար, որոշուեց օրը մի անգամ
տաք կերակուր տալ, որ պատրաստուեալ էր յա-
տուկ վարձուած խոհարարներին ձեռքով միաբա-
նակեան սեղանատանը, զօրանոցում, իսկ միւս
շէնքերում և մասնաւոր տներում զետեղուածները
ամաններով տանում էին կերակուրը: Ուտեաց
օրերում կերակուրն էր մսով բրնձով շիւայ, իսկ
պասերին՝ ձէթով բրնձով շիւայ:

Բազմահազար գաղթականներին կերակուր
և հաց մատակարարելու գործն այնքան յոգնե-
ցուցիչ էր, որ թէև Յանձնաժողովի անդամները,
վաղարշապատի մասնաժողովի բոլոր անդամներն,
ձեմարանի շատ սաներ և ուսանողներ անընդհա-
տաքի վերայ էին, այնուամենայնիւ հարկ հա-

մարտին՝ վաղձառ մարդիկ ունենալ մատակարար
 անհատներ կարգին տանելու համար:

Բացի կերակրից ու հացից Յաննաժողովս զօրանացում և սեղանատանը սկսեց թէյ առլ, իսկ միւս շէնքերում զանուղներին՝ թէյ, շաքար, մանաւանդ, երբ ստացուեց Մոսկուայի Հայկական Կօմիտէի ուղարկած թէյն ու շաքարը, իսկ հիււանդներին՝ կաթ:

Յանձնաժողովս նկատելով գաղթականների
մերկուրիաներ, վեհաժողով Հայրապետի գլխու-
թեմայի թեմայանի սաների հին հազուստները

480 ձևեր և դնած 1500 զոյգ գուլպաները բա-
ժանեց զաղթականներին և դիմուհի արեց
զանազան տեղեր, որ ուղարկեն հագուստ, որոն-
ցից հետո՛հետէ ստացուող հագուստեղէնը բաժա-
նեց էն ամենից մերկերին. սակայն հագուստից
զուրկ եղողներն այնքան շատ էին, որ բաժա-
նած հագուստեղէնը մի չնչին մասի մերկութիւնը
հազիւ ծածկեց:

Ըստ մատուցող հաշուի սկսած դեկտեմբերի 29-ից մինչև յունուարի 10-ը միջին թուով օրական կրակը եղել է 6500—7000 հոգի. իսկ զաղթականներ-փախստականներ այդ ժամանակաշրջանում եղել են իջմիածնում մոտ 15000 հոգի:

Հետզհետե՛ գաղթականներին՝ գիւղերն և ե-
րևան փոխադրելու համար նշանակուած էին
Յանձնաժողովի անդամներից, էջմիածնի միաբա-
նութիւնից և Վաղարշապատի մասնաճիւղից ան-
դամներ, որոնք յատուկ տոմսերով ուղարկում
էին էջմիածնի դաւառի գիւղերը, բացառութեամբ
Ապարանի շրջանը, իսկ մի մասին՝ Երևան Թե-
մական Յանձնաժողովին: Մինչև յունուարի 15-ը
գաղթականների մեծագոյն մասն արդէն ուղար-
կուած էր գիւղերն ու Երևան և Վաղարշապա-
տում մնացել էին մօտ 1000 գաղթական, որոնց
խնամատարութեան հոգսը շարունակուում է ցայս-
օր:

Դեռ Յանձնաժողովը նոր էր սկսել շունչ քաշել, երբ յունուարի վերջերին տեղա հասան Զեդեկանի, Մուլա-Սուլէյմանի, Բերդի փախստական զաղթականները, բացառապէս բաղկացած կանանցից, աղջիկներից և երեխաներից, ամենաթշուառ, լիկուած, բռնաբարուած և տանջուած քան նախկին փախստականները: Իսկ այժմ գալիս են արդէն Իզդիրի զիւղերում ապաստանած զաղթականները, որոնց զինուորական իշխանութիւնը դուրս է հանում այդ շրջանից: Ներկայումս էջմիթածնի գաւառում և Վաղարշապատում հաշուում է մօտ 7200 հոգի:

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ.

Ինչպէս ասուեց վերը, տեղս եկած գաղթա-
կանների մէջ կային շատ ցրտատարներ, և
հիւանդներ. Մայր Աթոռը հունենալով բժիշկ, իւր
Ֆելիզերին յանձնարարեց սկզբնական օգնութեան
հասնել հիւանդներին և դիմումն արեց զանազան
տեղեր բժշկական օգնութեան համար, սակայն
բժիշկ չհարուեց: Յանձնաժողովիս յաջողեց Երեւ-
անից հրաւիրել Թաւրիզից փախած ամերիկա-
կան կրթութեամբ բժիշկ պ. Օգսէն Տէր-Յարութեանին, որին յանձնարարեց հոգալ հիւանդ-

ներին և անհրաժեշտ դարմանն անել, սակայն մի բժիշկը շատ քիչ էր ամբողջ գաւառի մէջ ցրուած գաղթականներին համար, ուստի Նորին Սրբութիւնը միջնորդութիւն յարոյց կառավարութեան առաջ դերի ընկած տաճկական զօրքի մէջ գործող հայ բժիշկներին դնել Վեհապառ Հայրապետի հովանաւորութեան ներքոյ գործող Գլխաւոր Յանձնաժողովի արմադրութեան տակ: Այս միջնորդութիւնը յարգուեց և ուղարկուեցին երկու բժիշկ և մի ֆելդշեր Էջմիածնի գաւառում գործելու համար:

Ի նկատի ունենալով, որ դադլթականները մեջ կան ծանր հիւանդներ, ստամոքսային տիֆով բւռնուածներ և հունենալով բարեկեցիկ կեանք, հիւանդութիւնները կարող էին ծաւալուել, Յանձնաժողովս իւր յունուարի 6-ի նիստում որոշեց բանալ հիւանդանոց և Վեհափառ Հայրապետի հաճութիւնն ստանալուց յետոյ՝ վարձեց բնակարան և սկսեց նորոգել և յարմարացնել հիւանդանոցի համար, ի նորոյ պատրաստելով աճյառեղ բաղանիք, խոհանոց: Նաև բանալով նոյն հիւանդանոցին կից երթեկ հիւանդների համար ընդունելութեան սենեակ (ամբուլատորիա): Այս հիւանդանոցը 25 մահճակալով բացուեց փետրուարի 13-ին:

Սակայն ի նկատի ունենալով, որ հիւանդ-
ների թիւը շատանում է, Յանհամաժողովս որոշել
է բանալ նոր հիւանդանոց 45 մահճակալով և
ծրագրում է բանալ նաև վարակիչ հիւանդների
համար առանձին բաժանմունք:

3. ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Գաղթականները մեջ երևացին գլխովին որը երեխաներ, որոնց ծնողների ինչ լինելը ոչ ոք չգիտեր. դռքա թուով 18 հոգի յանձնուեցին Վաղարշապատի Կանանց տեղական Յանձնախմբին, որ խնամեն, կերակրեն, պահպանեն մինչև նույն ծնողների երևան գալը, եթէ կենդանի են: Դուրսնից մի մասի ծնողները յայանուեցին և տարան իրենց զաւակներին, իսկ միւս մասին ուղարկուեց Երևանի Թեմական Յանձնաժողովին իւր որբանոցում պահելու համար:

4. ԳԱՂԹԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԳՈՐԾԸ
ԷԶՄԻՍԾՆԻ ԳԱԽԱՌՈՒՄ.

Ինքնիշխան եկած և Վարդարշապատում ու Ջրվակայ գիղերում տեղաւորուած գաղթական ընտանիքների մէջ կային զպրոցական հասակի շատ

տղաներ և աղջիկներ, որոնցից մի մասը իրենց երկրում մինչև Ռուս-Տաճկական պատերազմը յաճախում էր դպրոց: Վաղարշապատի ծխական դպրոցի մանկավարժական ժողովը կամենալով իւրովսանն օգտակար լինել գաղթականների մասին հոգացողութեան գործում, իւր պատրաստակամութիւնն է յայտնում 50—70 երեխայ ընտրել և յետ ճաշու ժամերին պարապել նոցա հետ, անդրադէտներին գրագիտութիւն սովորեցնելով, իսկ գրագէտների հետ ուսումը շարունակելով: Յանձնաժողովս սիրով ընդառաջ գնաց այդ ցանկութեան, հոգաց այդ երեխաների թէ դասական պիտոյքները և թէ հագուստն ու անունը: Տեղական կանանց Յանձնախումբը, որ ամենայն պատրաստակամութեամբ յանձն էր առել գաղթականների համար հագուստեղէն կարելը, որ շարունակում է ցասօր, յանձն առաւ պատրաստել և այս մանուկների հագուստեղէնը:

Յանձնաժողովը մտադիր է նոյնպիսի յետ
ճաշու դպրոցներ բանալ և այն գիւղերում, ուր
գոյութիւն ունեն ծխական դպրոցներ:

5. ԳԻՒՂԵՐՈՒՄ ԲՆԱԿԵՅՐԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ
ՆՊԱՍՏ ՏԱՂՈՒ ԽՆԴԻՐԸ.

Գաղթթականներին գիւղերում տեղաւորելով Յանձնաժողովը յոյս ունէր, որ տեղական աղբաւ-
րնակութիւնը չի վլանալ իւր օգնութիւնը գաղ-
թականներին և նոցա անասուններին
տեղ ու կերակուր կտայ, մինչև Յանձնաժողովս
կցուցակադրի և նպաստի գործը կկազմակերպի.
և Յանձնաժողովը չսխալուեց. հրատարակելով
կոչ գիւղացիների համար, ուղարկելով Արիստա-
կէս վարդապետին, Թադէոս և Երուանդ արեղա-
ներին և Վաղարշապատի գործակալ Սարգիս քհն.
Ասլանեանին որոշ շրջաններ յորդոր կարգալ, որ
պահպանեն իրենց թշուառ եղբայրներին և քոյ-
րերին և նոցա անասուններին, բայց ի նկատի
ունենալով, որ մեր գիւղական ժողովուրդը նոյն-
պէս կարօտ գրութեան մէջ է և երկար չի կարող
պահել իւր հաշուով իրենց գիւղում ապաստանած
գաղթականներին, Յանձնաժողովս վերոյիշեալ ան-
ձերին յանձնարարել էր բոլոր գիւղերում ընտրել
տալ եղբայրական Օգնութեան Հոգաբարձութիւն-
անի որոնք պէտք է իրանց վերայ վերցնէին
գաղթականներին խնամելու գործը, ցուցակադրել
բոլոր գիւղերի գաղթականներին՝ քանի՞ տուն են
և քանի՞ շնչից բաղկացած, նկարագրեն նոցա
արդի վիճակը:

Վերոյիշեալ անձները իրենց վերայ դրած պարտականութիւններն ի կատար ածելով արդէն

Վերադաձել են և ներկայումս գիւղերի գաղթականներին ալիւր և հագուստ տալու գործը մտել է կանոնաւոր ուղիի մէջ:

6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔ ԵՒ ԵԼՔ.

Քաղթականական հոսանքի լուրն առնելով Նորին Սրբութիւնը հեռագրով դիմեց Ռուսաստանի և այլ երկրների հաստատութիւններին և ունեւոր անձերին, յորդորելով ազգային այս տագնապալից օրերին օգնութեան ձեռք կարկառել, ապա նուէրներ թէ դրամով և թէ բերելով:

Ինչպէս միշտ, այս անգամ ևս հայ ժողովրդի բանխմաց և կարեկից մասը աճապարեց իւր լուսման դէնել Վեհափառ Հայրապետի տրամադրութեան տակ և ինչպէս յատուկ տպուած հաշուից երևում է, երկու ամսուայ մէջ մինչև սոյն փետրուարի 23-ը ստացուել է 270871 ո. 91 կ. և հազուստեղէն, ալիւր, թէյ, շաքար, որ շարունակւում է դեռ ստացուել: Նոյն հաշուից երևում է որ ելք եղել է 90500 ուրերի:

II. ԳԼԽԱԽՈՐ ԿԱՐԳԱԳԻՐ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՅԹԻ ԿՐՈՂ
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹՅՈՒՆԸ:

1. ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովը ցանկանալով միւս շրջաններում բնակեցրած զաղթականների մասին տեղեկութիւն ունենալ և նոցա կարիքի չափը որոշել, յունուարի սկզբներին հրաւրեց Ալեքանդրապօլի Յանձնաժողովի նախագահ Սարգսի վարդապետին և լսեց նորա զեղծացումը Ալեքսանդրապօլում և շրջակայ դիւղեկուցումը զաղթականների մասին. յունուարի 9-ին Վեհափառ Հայրապետի հաճութեամբ նուարի 9-ին Վեհափառ Հայրապետին և Բարդէն վարդապետ Մատթէոս եղիսկոպոսին և Բարդէն վարդապետին ուղարկեց առաջինին Հին-Նախիջևան, երրորդին Իգդիր՝ այն տեղերի զաղթականների կրօնական և տեղական Յանձնաժողովների գործերութեան հետ ծանօթանալու, որոնք իրենց ծունկութեան հետ ծանօթանալու, որոնք իրենց մանրամասն զեկուցումներն են տուել: Անկախ սոցանից զեկուցումներ ստացել է Կարսից, Իգդիրից և Նախիջևանից տեղական յանձնաժողովների և նախագահներից զաղթականների գրութեան և կարիքի մասին:

Այս դումարից Գլխավոր Կարգադիր Յան-
ճառադուրմս ստացել է 36000 ռ. որից ծախսել է
30408 ռ. 20 կ.

7. «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻԻՆ» ՇԱՐԱԹԱ-
ԹԵՐԹ.

Յանձնաժողովս ի նկատի ունենալով, որ միութիւն ստեղծելու, հասարակական լայն շրջանին իրազեկ կացուցանելու համար բոլոր եղբայրական Օգնութեան Յանձնաժողովների գործունէութիւնը զաղթականական կարիքներին, որոշեց հրատարակել շաբաթը մի անգամ «Եղբայրական Օգնութիւն» անունով թերթ, ուր պիտի մտնեն զաղթականներին վերաբերեալ յօդուածներ, լրջթակցութիւններ, հաշիւներ և տեղեկագրեր և համաձայն Վեհափառ Հայրապետի կոնգակի ուղարկուելով բոլոր յանձնաժողովներին, կոմիտեաներին և նուիրատուներին, մեծապէս նպաստել եղբայրական Օգնութեան միութեան գործին:

ձև և միաժամանակ վիճակադրական տեղեկություններ կազմելու անհրաժեշտությունը: դ) Գաղութականներին հազուատեղի է և անկողին բաժանելու խնդիրը: զ) Ամեն տեղ բժշկական օգնություն կազմակերպելու խնդիրը, ե) Գաղթականների առողջապահական պայմաններ, մաքրություն, բաղանիքի խնդիրը, զ) Որբանոցներ և առհասակ անտէր ու չքաւոր երեխաներին խնամելու և ուսում տալու խնդիրը, է) Գաղթականների ծնուածներին, պսակուածներին և մեռածներին համար չափաբերական մատեաններ ունենալու խնամար

խնդիրը, ը) Աշխատանքի ընդունակների համաք-
ղործ և աշխատանք կազմակերպելը և թ) Համա-
պտմամբի կազմակերպումը:

դ) Յուճուճարի վերջին՝ վիճակագրական տեղեկությունների, տեղեկատու գործըյկի եղբայրական Օգնութեան Յանձնատողովներին տրուելիք մատեանների ձևերի մշակութեան համար:

Այս ընդհանուր որոշումներից մի քանիսը կատարուած են, մի քանիսը կատարուում են, իսկ միւսները կարօտ են ժամանակի ի կատար ածելու համար:

Նախագահ Յանձնաժողովի՝ եփրեմ եպիսկոպոս

Ան դ ա մ ն ե ր { Բագրատ եպիսկոպոս
Գաբեղին վարդապետ
Բաբգեն վարդապետ
Վրթաթեն վարդապետ

Անդամ-քարտուղար՝ Մասթինս Էպիսկոպոս

2. ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ
ԽԱՌՆ ՆԻՍՍԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄԵՐ.

Համաձայն Վեհափառ Հայրապետի սրբա-
տառ կոնդակի ե. կէտի Գլխաւոր Կարգադիր
Յանձնաժողովը բարւոք է համարել գաղթական-
ներին վերաբերեալ ընդհանուր բնոյթ կրող հար-
ցերի լուծման համար խառը նիստ գումարել
Երեւանի Թեմական Յանձնաժողովի ներկայացու-
ցիչների հետ և առդա ձեռնարկել ուղղումներն ի
կատարածելու:

Այդպիսի խառն հիստերի տեղի են ունեցել
երեք անգամ,

ա) Անցեալ դեկտեմբերի 31-ին երևանի Յանձնաժողովի գործունէութեան սահմանները որոշելու համար և մօտաւոր նախահաշիւ կազմելու գաղթականների համար հազուստեղէնի և այլ իրերի պատրաստութեան մասին,

բ) Յունուարի 24-ին, ուր շօշափուած են յատուկ օրակարգով խնդիրներ, որոնք տպուած են արդէն, այդ շօշափուած հարցերն են. ա) գաղթ թականներին գիւղերում խնամելու և կերակրելու գործի կանոնաւոր կազմակերպութիւնը, բ) միաժամանակեան արտադրութեան զարգացումը:

Բ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԵՐԵՒԱՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԺՈՒՆԷՈՒԹԵԱՆ՝

Գաղթականութեան հոսանքի մասին առաջին հեռագիրը ստացուելուն պէս յանձնաժողովիս նախագահ գերապատիւ տ. Սորէն եպիսկոպոսի նախաձեռնութեամբ անցեալ տարուայ դեկտեմբերի 21-ին ժողովի հրաւիրուեցին Երեւանում գործող բոլոր ընտրեալ մարմինները և ընտրուեց եղբայրական օգնութեան խառն յանձնաժողով 25 անդամից բաղկացած, որի վրայ դրուեց գաղթականներին ընդունելու, պահպանելու և տեղաւորելու գործը, որպիսի յանձնաժողովը արժանացաւ Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր հովանաւորութեանը և նրա օրհնութեամբ գործի անցաւ:

Նոյն դեկտեմբերի 26-ին կայացած ժողովում յանձնաժողովի կազմը լրացուեց և նոր անդամներով, ընտրուեց և գործադիր մարմին, կազմակերպուեց են ծխական-համայնական ենթակոմիտէներ և զանազան սեկցիաներ, որոնք գործի են անցնում գործադիր մարմնի հրահանգութեամբ ու ցուցմունքներով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Նոյն ամսի 22-ին գաղթականներին ընդունելու և փոխադրելու գործով էջմիածին մեկնեցին գործադիր մարմնի նախագահ տ. Սորէն եպիսկոպոսը և անդամներ պ. պ. Գրիգոր Տէր-Սաչաւորեանը և Սմբատ Սաչաւորեանը և ներկայանալով Նորին Վեհափառութեանը խնդրեցին հարկաւոր հրահանգները, բանաւոր կերպով զեկուցելով ապագայ գործունէութեան համար, յանձնաժողովիս բռնելիք գիրքը: Ապա նոյն օրը Նորին Ս. Օծութեան հրամանով տ. Սորէն եպիսկոպոսը և Ս. Սաչաւորեանը ուղևորուեցին Իգդիր, ուր խորհրդակցութիւն են կազմակերպում տեղում ընտրուած Եղբայրական Օգնութեան մարմնի հետ և ապա ներկայանում են . . . գորաբանակի

հրամանատար գեներալ . . . -ին, խորհրդակցելու նրա հետ ի միջի այլոց գաղթականներին փոխադրելու միջոցների մասին:

Տ. Սորէն եպիսկոպոսի և Ս. Սաչաւորեանի միջնորդութիւնը յարգելով գեներալ Օ . . . խոստանում է զինուորական սայլերը դնել Եղբայրական օգնութեան յանձնաժողովի տրամադրութեան տակ և ամեն աջակցութիւն ցոյց տալ, որ գաղթականներին ապահով կերպով հնարաւոր լինի տեղափոխել: Գեներալ Օ . . . կատարեց իր խոստումը և գաղթականութեան ամբողջ հոսանքի ընթացքում զինուորական բոլոր ազատ սայլերը գաղթականներ էին փոխադրում Օրգովից - Իգդիր - Մարգարա և էջմիածին:

Դեկտեմբերի 23-ին համաձայն յանձնաժողովիս ներկայացուցիչների խոստման մի հազար ուսուցիչ է յանձնուում Իգդիրի յանձնաժողովի ներկայացուցիչ և ապա ուղարկուում է հարկաւոր քանակութեամբ յալիւր: Սպասելով գաղթականութեան հոսանքին և ուղարկութեան առնելով այն հանդամանքը, որ գաղթականները Իգդիրից ճանապարհուկու են Զգէպի էջմիածին և Սարտարապատի շրջանը Մարգարա գիւղով, յանձնաժողովս ժամանակին մարդիկ ուղարկեց Մարգարա, հիմնեց իջևանատեղի, ուր և ուղարկուեց հարկաւոր քանակութեամբ հագուստ, վերմակներ, հաց և զրամ և որպիսի կարգադրութեան շնորհիւ բոլոր գաղթականները Մարգարայում պատասխարւում էին, կերակրուում էին և ապա ուղարկուում Սարգարապատի շրջանի գիւղերը, նախապէս կազմած ցուցակների համաձայն և ապա զէպի էջմիածին:

Որպէս զի Սարգարապատի շրջանում գաղթականներին տեղաւորելու գործը կատարուէր կանոնաւոր կերպով, յանձնաժողովս նախապէս կանչել էր Երեւան Սրգարապատի շրջանի գործակալ Գարեգին քահանային, որը համաձայն յանձնաժողովիցս տրուած հրահանգի պատրաստել էր մի ցուցակ, թէ որ հայաբնակ գիւղը, որքան

ընտանիք և շունչ կարող էր պատասխարել:

Յանձնաժողովս ապահով լինելով, որ գաղթականներին փոխադրումը և պատասխարումը մինչև էջմիածին կանոնաւոր կերպով առաջ կերթայ — համոզուած լինելով նաև, որ էջմիածնի Կարգադիր Յանձնաժողովը ամեն ջանք գործ կդնէ էջմիածնից գաղթականներին Վաղարշապատի և Աշտարակի շրջաններ գիւղերը ուղարկելու վերաբերմամբ և որ մնացած մասը կուղարկի զէպի Երեւան, անմիջապէս կարգադրութիւններ արեց գաղթականներին Երեւանում ընդունելու և Երեւանից գիւղերը ուղարկելու վերաբերմամբ:

Էջմիածնից Երեւան գալու համար գաղթականները պէտք է մտնէին Փարաքար գիւղը, ուր ընտրուեց մի մարմին, որը Փարաքարով անցնող գաղթականներին կերակուր, թէյ և հաց էր տալիս զպրոցական ընդարձակ շինութեան մէջ և ապա ճանապարհում զէպի Երեւան:

Կազմակերպուեցին շրջանային մարմիններ, Երեւանի գաւառի, Ղամարլու, Դաւալու, Փարաքար և Քանաքեռ գիւղերում. Նոր-Բայազետի գաւառում՝ Նոր-Բայազետում, Ախտայում, Սուխոյ-Փոնտանում և Ելինովկայում, որպիսի մարմինների կազմակերպութեանց համար տեղացիներից նախապէս կանչուած էին Երեւան, հարկաւոր հրահանգները ստանալու համար:

Երեւանում Յանձնաժողովիս կարգադրութեամբ դատարկուեցին և պատրաստուեցին թեմական, Գայիանեան և 5 ծխական գալոցական շէնքերը և բացի դոցանից վարձուեց ս. Սարգիս եկեղեցուն կից մի ընդարձակ շէնք: Բոլոր շէնքերը ունեցան իրենց կառավարիչները յանձին ծխական համայնական ենթակոմիտէներին:

Գաղթականները էջմիածնից Փարաքարի վրայով ուղղակի գալիս էին Երեւան-թեմական գալոցանոց, ուր նրանց ընդունում էր գաղթականներին ընդունող և քաղաքում տեղաւորող սեկցիան և երբ թեմական գալոցանոցի շէնքը լցուում էր, ֆուրգոնները յատուկ մարդկանց միջոցով ուղղում էր զէպի այլ գալոցական շէնքեր, նախապէս տեղեկութիւններ ստանալով թէ որտեղ որքան ազատ տեղ կայ:

Ենթակոմիտէները իրենց խնամքին յանձնուած գաղթականներին պատասխարում էին, անմիջապէս թէյով հիւրասիրում նրանց և ապա կանոնաւոր կերպով տալիս էին նրանց ճաշին տաք կերակուր և առաւօտ ու երեկոյ թէյ:

Միաժամանակ գործում էին գաղթականներին ցուցակագրող և տեղափոխող սեկցիաները: Առաջինը խմբերի բաժանուած ցուցակագրում էր գաղթականներին, իսկ երկրորդը ամենայն օր ամփոփելով ցուցակները տեղափոխում էր գաղ-

թականներին գիւղերը, համաձայն նախապէս ստացած ցուցակների թէ որ գիւղում որքան տուն պէտք է ուղարկէր, աշխատելով այնպէս կատարել տեղաւորումը, որ հնարաւորութեան սահմաններում միևնոյն գիւղացիները տեղաւորուեն մի գիւղում կամ երկու հարեան գիւղերում: Յանձնաժողովս բաւարարութիւն էր տալիս նաև կաթովիկ հայերի խնդրին, որոնց ուղարկում էր Ալեքսանդրապոլ, այնտեղի հայ կաթովիկ գիւղերում տեղաւորելու համար:

Յանձնաժողովս Երեւանից ամենից առաջ գաղթականներ ուղարկեց Կոտէից շրջանը, միաժամանակ ինչ ինչ պատճառներով ուղարկեց նաև Ղամարլուի շրջանը: Կոտէից շրջանը գնացող գաղթականներին առաջնորդում էին շրջանի գործակալը և տեղական գիւղերի ներկայացուցիչները, իսկ Ղամարլուի շրջանը ուղարկուածներին առաջնորդում էին փոխադրող սեկցիայի անգամներից, որոնք հասցնում էին նրանց Ղամարլու, որտեղի հանրակայարանից տեղական գիւղացիները իրենց սայլերով տանում էին իրենց գիւղերը որոշուած քանակութեամբ գաղթականներ:

Երբ յիշեալ շրջանները լցուեցին, տեղափոխող սեկցիան սկսեց գաղթականներին փոխադրել զէպի Բայազետի գաւառի Մաղկաձորի մասը:

Գաղթականների համար իջևանատեղիներ էին պատրաստուած Ելար, Սուխոյ-Փոնտան, Ախտա և Ելինովկա գիւղերում, ուր գաղթականները թէյ, հաց էին ստանում և ստանում են և ապա ուղարկում մօտակայ գիւղերը: Որովհետև գաղթականութեան հոսանքը միաժամանակ սկսուեց նաև Պարսկաստանից, ուստի Յանձնաժողովս որոշ չափով օգնութեան հասնելու նպատակով իր անդամներից մէկին ուղարկեց Զուլֆա և Նախիջևան որոշ յանձնարարութեամբ, ուղարկելով նաև Նախիջևանի Յանձնաժողովին ալիւր և զրամ:

Ի վերջոյ Յանձնաժողովիս կարգադրութեամբ մի առանձին մարմին քաղաքում բնակարաններ և առանձին սենեակներ էր վարձում և տեղաւորում այն ընտանիքներին, որոնք մնալու էին քաղաքում: Գաղթականութեան հոսանքը դեռ ևս շարունակուում է, գալիս են Իգդիրում մնացածները և ժամանակաւորապէս Մուսուն և Քուրուն գիւղերում պատասխարուածները, գալիս են նաև շատերը գիւղերում տեղաւորուածները, որոնք կլիմայական պայմաններին չըդիմանալով, խընդրում են ուղարկել այլ գիւղեր: Բացի սուցանից գալիս են Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջանից յետ մնացածները, ուղացողները, որոնց այր մարդիկը կոտորուել են, աղջիկները ու ջահել հարսները տեղանգուել, լիկուել, բռնաբարուել:



Այս եկողները, որոնցից 90 տոկոսը կազմում են հասակավոր կանայք ու երեխաներ, իրենց ճակատին կրում են թշուառութեան կնիքը, նորածնիկ են, քաղցած, ապշած հիւանդ... սոսմելի են, տպաւորութիւն են թողնում: Նրանք իջեկալի տպաւորութիւն են թողնում: Նրանք իջեկալի են Թեմական Դպրանոցի շէնքում և Յանձնում են Թեմական պատճառով մեծ մասը մնում է: Եւ տաւորութեան պատճառով մեծ մասը մնում է: Այս գաղթականների համար յունվարի 10-ին զինուորական վարչութիւնը հեռագրերով խնդրել էր, որ Յանձնաժողովս միջոցներ ձեռք առնի հաւաքելու այդ թշուառներին և Ղարաքիլիսայից բերելու Ռուսաստան, որովհետեւ ոչ մի հնարաւորութիւն չկար ֆուրգոններ ուղարկելու մինչև Ղարաքիլիսա, ուստի Յանձնաժողովիս նախագահի միջոցով դիմում եղաւ Դ-րդ զօրաւորակի հրամանատար զեներալ Օ...-ուն, որ նա կարգադրի գաղթականներին զինուորական դատարկ վերադարձող սայլերով բերելու համար, որպիսի դիմումը յարգուեց զեներալի կողմից, որը հեռագրով պատասխանեց տ. Սորէն եպիսկոպոսին, որ պատուիրուած է զեներալ Ա...-ին զինուորական սայլերով փոխադրել գաղթականներին: Մի մասի գալուց յետոյ լուր ստացուեց, որ գաղթականների մէջ երկացել է լծաւոր տիֆ հիւանդութիւնը, այդ հանգամանքը ի նկատի ունենալով զեներալ Օ...-ին կարգադրել էր հիւանդներին թողնել, իսկ առողջներին ուղարկել Էջմիածին-Երևան առանց իգգիւր մտնելու՝ Հախվերիս գիւղի վրայով: Յանձնաժողովիս կարգադրութեամբ Հախվերիսում կազմակերպուեց իջեկանատեղի, որտեղի գաղթականները Մարգարայի և Էջմիածնի վրայով ուղղակի եկան Երևան:

ԵՐԵՒԱՆ ԲԱՂԱՅՈՒՄ, ԵՐԵՒԱՆԻ, ԻԳԴԻՐԻ ԵՒ ՆՈՐ-ԲԱՅԱԶԻՏԻ ԳԱԽՎԵՐԻՍ ՊԱՏՍՊԱՐՈՒՄԸ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՒՆԸ.

Միաժամանակ Երևանի հանրակայարաններում տեղաւորուած գաղթականների թիւը հասնում էր 2600 շնչի և որովհետեւ գիւղերը փոխաւորուածներին փոխարէն նորերն էին գալիս Էջմիածնից, Էջմիածին կայարանից և մասամբ՝ Նախիջևանից, ուստի սկզբներում թիւը մնում էր նոյնը:

Թէև Յանձնաժողովս ամեն կերպ աշխատում էր գաղթականներին նահանգից դուրս չհանել, նոյն իսկ չուղարկել Ալեքսանդրապոլ, ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլ են գալիս Սարիղամիշի շրջանի գաղթականները, այնուամենայնիւ Յանձնաժողովս ստիպուած էր որոշ խնդրա-

տուներին բաւարարել և ուղարկել Թիֆլիզ, Ղարս և Ալեքսանդրապոլ:

Երևան եկած և Երևանից դանազան գիւղեր ուղարկած և քաղաքում մնացած գաղթականների թիւը 8617 է, որոնք տեղաւորուել են այսպէս:

Երևանի գաւառում

Երևան քաղաք	2316
Կոտէից շրջան	1485
Ձանդի բնակար	327
Գառնի բնակար	1038
	5166

Նոր-Բայազետի գաւառում

Ծաղկաձորի շրջան	1223
Նոր-Բայիզետի շրջան	110

1333

Բացի Երևանի և Նոր-Բայազետի գաւառների ուղարկուածներէն՝ Երևանից ուղարկուել են.

Աշտարակի շրջանը	269
Ղարսի	76
Կաղզուան	38
Տփլիս	169
Աղին, Անի, Արաքս	168
Սարգարապատ	124
Հին-Նախիջևան և Ջուլֆա վերագարձողներ	89
Գէպի Իգգիւր և երկիր	425
Ալեքսանդրապոլ	360

1518

Բացի Երևանից ուղարկուածներից, Նախիջևանից ուղղակի Գառնի-Բասար եկել են ինն հարիւր շունչ:

Հետեւեալ երեք գաւառներում հայ գաղթականների թիւն էր.

Երևանի գաւ. առ 1 փետր.	4601	առ 26 փետր.	6076
Նոր-Բայազետի գաւ.	» 820	»	1333
Իգգիւրի գաւառ.	» 2974	»	2123

Սոյն զեկուցմանը կցուած է մանրամասն վիճակագրական տեղեկութեանց աղիւսակներ, կազմուած յունվարի 31-ին ամբողջ Երևանի նահանգի համար բացի Ալեքսանդրապոլի գաւառից: Կցուած է նաեւ այժմ նահանգական յանձնաժողովի աղիւսակները պատճէնը:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՍՊԱՐՈՒԹԻՒՆԸ.

Ձեկուցման առաջին մասում համառօտ կերպով նկարագրուած է, որ մինչև որեւէ գիւղ ուղարկելը գաղթականներին թէ ճանապարհին և թէ Երևանում հանրակայարան իջեկանատեղիներում տրուել է թէյ, հաց և տաք կերակուր: Գիւղերում նախ քան գաղթականների գալը

ընտրուած Եղբայրական Օգնութեան հոգաբարձութեանց միջոցով հաւաքուած է եղել որոշ քանակութեամբ ալիւր և դրամ, որպէս որոշ ժամանակաշրջանի գիւղացիները իրենք պահպանէին իրենց թշուառ անապատտան եղբայրներին և քոյրերին: Թէ Երևանի և թէ Բայազետի գաւառներում ամեն մի գիւղ մինչև փետրվարի 2-ը ինքը իր ժողոված նպաստով է պահպանել իր մէջ ապաստանած գաղթականներին հոգալով նրանց ապրուստը, վառելիքը և տաւարի կերը: Որոշ գիւղեր տուել են գաղթականներին ալիւր կամ հաց, իսկ որոշ տեղերում էլ դրամ:

Դժբախտաբար Երևանի նահանգի հայ ազգաբնակչութիւնը տնտեսապէս ծանր կացութեան մէջ է գտնուում, ուստի և բնական և օրինաւոր էին այն տրտուեցները, որ լսուած էին ազգաբնակչութեան կողմից երբեմն, նամանաւանդ որ մօտ 5000-ի չափ ասորիներ են տեղաւորուած Երևանի գաւառում:

Յանձնաժողովս դեռ յունվարին գնել էր մօտ 300 փութ ալիւր Ծաղկաձորի շրջանը գնացող գաղթականներին նպաստ տալու համար: Փետրուարի 29-ից միայն բաժանուեց գաղթականներին ալիւր և ապա փետրուարի 16-ից շնչին 30-ական ֆունտ մինչև մարտի 5-ը:

Բացի ալիւրից շրջանային մարմիններին իրաւունք է տրուած հիւանդ և կարիքաւոր ընտանիքներին տալ թէյ և շաքար:

Յանձնաժողովս շատ փափուկ դրութեան մէջ էր շնորհիւ այն հանգամանքի, որ իր շրջանում է տեղաւորուած Պարսկաստանից գաղթած ասորի ազգաբնակչութիւնը: Բարոյական իրաւունք չունենալով ազգային դրամները ծախսել ասորի փախստականների վրայ Յանձնաժողովս իր նախագահի միջոցով նահանգական ժողովում աշխատել է ստեղծել մի դրութիւն, որ գաղթականներին նպաստ տրուի պետական միջոցներով առ այժմս գոնէ Երևանի գաւառում ուր ասորիներն են տեղաւորուած: Եւ փետրուարի 29 ից մինչև մարտի 5-ն Երևանի գաւառում բաժանուած շնչին 40 ֆ. ալիւրը գնուել է նահանգական կոմիտէի տրամադրութեան տակ եղած դրամներով:

Նոր-Բայազետի գաւառի գաղթականների համար ուղարկուած է դրամ տեղումը ալիւր գնելու ու բաժանելու համար— իսկ Իգգիւրի շրջանի գաղթականների համար ուղարկուած է 400 փութ ալիւր ու դրամ: Նպաստները բաշխուել են առհասարակ մեր շրջանային մարմինների հսկողութեամբ տեղական եղբայրական օգնութեան հոգաբարձութեանց ձեռքով:

Քաղաքում զանազան բնակարաններում և սենեակներում պատասպարուածներին, Յանձնա-

ժողովիս որոշմամբ դրամական նպաստ է տրուում շնչին 10 կոպ.: Սոյն նպաստի բաշխման համար քաղաքում կազմուած կայ երեք անգամից բաղկացած յանձնաժողով, որ կազմուած կանոնաւոր ցուցակներով բաշխում է նպաստը 10 օրը մի անգամ: Վճարուում է նաեւ քաղաքում բնակւողների սենեակների վարձը, որի համար նոյնպէս կան յատուկ ցուցակներ:

Գալով հազուատների բաշխման պէտք է ասել, որ բոլոր Երևան եկած գաղթականները ստանում են հագուստ, անկողին, կօշիկներ և: Առանձին մարմին ձեռքով ցուցակագրուել են գաղթականները և ստացել ու ստանում են փոքրիկ թերթիկներ, որոնցով հազուատների պահեստից ստանում են բոլոր անհրաժեշտ հագուստները առատութեամբ:

Առանց հազուատեղէն և անկողին տալու ոչ մի գաղթական չի ուղարկուել քաղաքից դուրս: Գիշերով եկածներին անմիջապէս այցելում են յանձնաժողովիս ներկայացուցիչները և բաժանում են վերմակներ: Բացի քաղաքում տուած հագուստեղէնից գիւղերը ուղարկուած գաղթականներին բաժանուել են նաեւ որոշ տեղերում անհրաժեշտ հագուստեղէնը, իսկ մնացած տեղերում ուղարկուելու են պարբերաբար համաձայն շրջիկների տուած տեղեկութիւնների:

Ենթադրելով, որ քաղաքում գետեղուածներից շատերը նոյնպէս կուենան հազուատեղէնի և անկողնի պակասութիւն, այդ բանը լրացնելու համար յանձնաժողովիս անդամներից երկուսը շարունակ այցելում են քաղաքում առանձին տեղում բնակւող գաղթականներին և ցուցակագրում նրանց կարիքները, որպիսի ցուցակների համաձայն տրոււմ է նրանց անհրաժեշտը:

Բացի սորանից յանձնաժողովս իր տրամադրութեան տակ ունի նաեւ մի շրջիկ մօտիկ վից գիւղերի և քաղաքի համար, որը ամենայն օր շրջում է քաղաքի որոշ մասը, այցելում է այդ մասում բնակւող գաղթականներին և նախորդ օրը որոշ խնդիր ներկայացնողներին և անմիջապէս զեկուցանում յանձնաժողովիս նախագահին կամ նրան փոխարինողին հարկաւորը կարգադրելու համար:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՍԱՆՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ.

Յանձնաժողովս իր գործունէութեան առաջին օրուանից մտածել է գաղթականներին բժշկական օգնութիւն հասցնելու մասին: Այդ նպատակով յանձնաժողովս ունի բժշկական սեկցիան,

որի մէջ մասնում են քաղաքիս բոլոր հայ բժիշկ-
ները և որոնք հերթով, օրական երկուսը այցե-
լում են բոլոր գաղթականներին հարկաւոր օգնու-
նութիւնը հասցնելու նրանց հիւանդներին:

Փաղթականութեան հոսանքի սկզբում հիւանդութիւնը կազմում էր փոքր տոկոս. բոլոր հիւանդներն էլ կամ սառած էին կամ մլսած, վերջինների թւում կային հիւանդներ թոքերի բորբոքումով և շատ քիչ թուով տիֆով:

Յանձնաժողովս առաջին օրերը հիւանդներին ուղարկում էր քաղաքային հիւանդանոցը, ուր ամենայն սիրալիբրութեամբ ընդունում էին նրանց և հարկաւոր օգնութիւնը հասցնում: Թեթև հիւանդները բժշկւում էին հանրակայարաններում, որոնց ամեն օր այցելում էին հերթապահ բժիշկները, որոնց գրած տեղերը բաժանում էին հիւանդներին Գայրանեան զաւրոյի բարձր գասաբանի աշակերտուհիները, համաձայն բժիշկներից ստացած հրահանգներին:

Նկատելով, որ ծանր հիւանդներին հանրա-
կայարաններում բժշկելը անհնարին կլինէր, և որ
քաղաքային հիւանդանոցում բոլոր ծանր հիւանդ-
ներին ընդունել տալը հնարաւոր չէր լինում,
յանձնաժողովս Յունվարի 1-ից բացեց իր հիւան-
դանոցը Ս. Սարգիս եկեղեցուն կից վարձու շէն-
քում և հետզհետէ ընդարձակեց այն և բարեկար-
գեց յարմարեցնելով հիւանդանոցային բոլոր պա-
հանջներին:

[illegible]

Գաղթականական հիւանդանոցը ունի իր
յատուկ բժիշկը, որը հիւանդանոցում լինում է

առաւօտները ժամի 8-ից մինչև 1-ը և երեկոները ժամը 6-ից մինչև 9-ը: Ունինք մի գլխավոր ֆէլդշէր երկու օգնականներով, 3 քոյրեր և հարկավոր թուով սպասաւորներ: Բացի վերոգրեալներէն հիւանդանոցը ունի իր կառավարիչը:

Պէտք է ասել, որ հիւանդանոցը ունի իր յատուկ խոհանոցը և լուսացարանը: Հիւանդանոցի բարեկարգութեան գործում մեծ աշխատանք են գործ դրել տիկնանց յանձնաժողովի անդամները, որոնք և իրենցից հերթապահներ էին նշանակել, զժբախտաբար երբ տիֆը համաճարակի բնաւորութիւն ստացաւ տիկիներն զաղարեցին հիւանդանոց այցելելոց: Ձենք կարող չը շշտել, որ հիւանդանոցի բարեկարգութիւնը ամբողջովին իր վրայ վերցրեց տիկ. Մուսինեանը, որը ամենայն եռանդով մինչև այսօր աշխատում է հիւանդանոցում ամբողջ օրերով:

Գաղթականութեան վերջին հոսանքը, երբ
ահագին դժուարութիւններով հնարաւոր եղաւ յետ
մնացածներին, կոտորածից ազատուածներին, բռնա-
բարուածներին և լքուածներին բերել Ռուսաս-
տան, ուղղակի Նրեան գալով բերեց իր հետ տիֆ
հիւանդութիւնը ամենամեծ չափով: Եկածները
միայն կանայք ու երեխաներ էին, որոնց 500/0
հիւանդներ: Այդ բոլորը տեղաւորուեցին թեմա-
կան դպրանոցի շէնքում, որոնց տրուեց յարմա-
րութիւններ, խոտէ դռակներ և բրդէ վերմակներ:
Այդ գաղթականներից ծանր հիւանդներին անմի-
ջապէս տեղաւորում էին հիւանդանոց, իսկ մնա-
ցածներին օգնութեան էին հասնում հերթապահ
բժիշկները:

Որպէսզի հնարաւոր լինէր գտաել հիւանդ-
ներին առողջներից թեմական դպրանոցում երկու
սենեակ վերածուեց ժամանակաւոր հիւանդանոցի,
ուր պատրաստուած անկողիններէ վրայ մեծ
գժուարութեամբ տեղաւորուեցին հիւանդները,
գժարատար հնարաւոր չեղաւ այդ միջոցը դոր-
ժադրել, որովհետեւ հիւանդները իրանց վերմակ-
ները վերցնելով փախան իրենց որը թողած
երեսաների մօտ: Առհասարակ մեծ գժուարու-
թեամբ հնարաւոր է լինում հիւանդներին տա-
նել հիւանդանոց և սկզբում դէպքեր են պատա-
հել, որ հիւանդը 40 աստիճան տաքութեան մէջ
փախել է հիւանդանոցից: Մինչև այժմ էլ հեր-
թապահ բժիշկները յաճախում են թեմական
դպրանոցի շէնքում եղած հիւանդներին մշտական
ֆէլտշերի հետ միասին և տալիս են դեղեր, իսկ
ծանր հիւանդներին ցուցակագրում և ուղարկում
հիւանդանոց: Ինչ վերաբերում է թեթեւ հիւանդ-
ներին նրանք գնում են հիւանդանոց, ուր բժիշկը
նայում է նրանց և հարկաւոր օգնութիւնը հաս-
ցնում: Գալով քաղաքում մասնաւոր տներում

ընակեող գաղթականներին, որոնց մէջ նոյնպէս հիւանդներ կան. յանձնաժողովիս կարգադրութեամբ շրջիկը շրջում է տները և ամենայն օր ներկայացնում է հիւանդների ցուցակներ, որոնց հասցէները ուղարկւում է հերթապահ բժիկներին, որոնք գնում այցելում են նրանց և հարկաւոր օգնութիւնը հասցնում: Բոլոր դեղերը գնում է յանձնաժողովս և ուղարկում հիւանդներին:

Գաւառներում տեղաւորուած գաղթականներ
րի մէջ ևս կան հիւանդներ, որոնց բժշկական
օգնութեան շատ աշխատանք է գործ դրել յանձ-
նաժողովս: Նահանգական կոմիտէի ջանքերով ու-
րոշ գաւառներ ուղարկուած են բժիշկներ, որ
գտնուում են մեծ դժուարութեամբ, մեծ կարիք
կայ բժշկի Մաղկաձորի շրջանում, ուր մարտի
1-ից լինելու է, որպէս շրջիկ բժիշկ Աւետիս Տէր-
Յովհաննիսեանը, որի հետ յանձնաժողովս պայ-
մանաւորուել է: Աւելորդ չենք համարում ասել,
որ սկզբում, երբ պարսկաստանի գաղթականնե-
րը անօգնական թափուած էին Զուլֆայում և
Նախիջևանում յանձնաժողովս ուղարկեց այնտեղ
բժիշկ Վ. Արշակունին, որը 10 օրից վերադարձաւ
գտնելով իր ներկայութիւնը այնտեղ անօգուտ:

ՈՐԲԵՐ ԵՒ ՈՐԲԱՆՈՑ.

Յանձնաժողովս ուշադրութեան արձնելով
այն հանգամանքը, որ գաղթականների մէջ կան
երեխաներ, որոնք ծնողներ չունին կամ կորցրել
են նրանց, ժամանակաւորապէս Գալիանեան դպ-
րոցի սենեակներից մէկը յատկացրեց այդպիսի-
ներին և ապա Կովկասի Հայոց Բարեգործական
Ընկերութեան որբանոցը ընդարձակելով տեղա-
ւորեց նրանց այնտեղ հոգալով նրանց բոլոր կա-
րիքները: Յանձնաժողովս նոյն որբանոցում պա-
տապարեց նաև այն որրերին, որոնց ուղարկեց
Ատրպատականի առաջնորդ Տէր Ներսէս եպիսկո-
պոսը Ձուլֆայից:

Որովհետև որբերի մեջ կային փոքրահասակներ 1, 1½ տարեկան, որոնց պահելը ահադին զժուարութիւնների հետ էր կապուած, յանձնաժողովս ալլախիսներին տուել է ի պահպանութիւն, որդի չունեցող ընտանիքներին այն պայմանով, որ առաջին պահանջին վերադարձնեն համաձայն տուած ստորագրութեան: Այսպիսի որբերի թիւն է 80: Որբանոցում, որբերը ունին իրենց առանձին մահճակալները, մաքրուած են բոլորովին, ունին հագուստներ, կօշիկներ և բոլոր յարմարութիւնները:

Ներկայումս որբանոցում կան 18 որբեր, ու
բոնցից 5-ը պարսկահայեր և 13 տաճկահայեր:

18-ից 5-ը տղաներ են, 13-ն աղջիկներ։ Սմենա-
մեծի տարիքն է 15, ամենափոքրինը 2¹/₂։ Որբերից
10-ը ծնողների չունին կամ սպանուած են կամ
մեռած, մնացածից 5-ը կամ մայր ունին կամ
հայր, իսկ երեքը և հայր և մայր, բայց նոցա
տեղը մինչև այսօր յայտնի չէ բացի մէկից, որի
մայրը Նրեւանուամն է, բայց խելացնոր է։

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎԼԱՍՈՒԱԾՆԵՐԻ
ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏ

Երևանի Նահանգապետի նախագահութեամբ
դեռ գաղթականութիւնից առաջ Երևանում գործում
էր պատերազմից փնասուածների Երևանի Նահան-
գական կոմիտետը, որը այժմ զբաղուած է գաղ-
թականներին նպաստելու գործով: Այդ կոմիտե-
տի անդամներն են առանձին մասերի պետական
կառավարիչները և հոգևորականութեան ներ-
կայացուցիչները՝ բացի յանձնաժողովիս նախա-
գահից:

Վերջինիս առաջարկով այդ կոմիտեների անդամներն են հայերից Պ. պ. Գրիգոր Տէր-Սաչա-տրեան, Գ. Ամիրեան, Մ. Մուսինեան և Յովո Մելիքեան: Այդ կոմիտեների նիստերում յանձնա-ժողովս ամեն աշխատանք գործ է դրել որոշ խըն-դիրներին յաջող լուծման համար:

Երբ սկսուեց Պարսկաստանի հայերի և Ասորիներին գաղթը և ստեղծուեց Ջուլֆայում սոսկալի դրուժին, յանձնաժողովս հետևեալ խնդիրները քննութեան դրեց կոմիտեոյի նիստերում, որոնք և իրենց յաջող լուծումը ստացան:

1. Զուլֆայում վերացումն մաքսի գաղթա-
կանները համար.

2. Առանձին գնացքներ Զուլֆայից Նախի-
ջևան և ապա Երևան.

3. Գաղթականներին ձրիաբար երկաթուղի-
ով տեղավորութիւն.

4. Զինւորական արտոններ զաղթականներին
տեղափոխելու համար.

5. Փող մանրացնելու և փոխելու խանութի բացում Զուլֆայում:

6, Առանձին պաշտօնէութիւն դադրեալան-
նելըին անցաթուղթ տալու համար.

Դ: Զինվորական բժշկաների օգնութիւնն **զաղ-**
թականներին ջուլֆալում.

Բացի սոյն խնդիրներէց յանձնաժողովս
ամենամեծ ուշադրութիւնն է դարձրել զաղթա-
կաններին պետութեան կողմից նպաստ տալու
խնդրի վրայ: Դեռ գործի սկզբում, երբ ենթադրե-
րում էր, որ Երևանի Նահանգում գետեղումն զաղ-
թականների թիւը 70 հազարի կրնասնի, յանձ-

նաժողովին ներկայացուցիչները պահանջ են դնում, որ հաշուելով շնչին առնուադն 10 կող ամսական 210,000 ուրբլի տրուել պետական դանձաբանից նպաստ: Որպիսի խնդիրը միաձայն անցաւ կոմիտէտում և պատշաճաւոր դիմումն հղաւ թիֆլիզի գլխաւոր կոմիտէտին: Գաղթականների թշուառ դրութեան հետ հետզհետէ ծանօթանալով մեր ներկայացուցիչները ամեն անգամ պնդում են իրենց առաջարկի վրայ: Ապագայում երբ վիճակագրութիւնը ցոյց տուեց, որ Երևանի նահանգում տեղաւորուած գաղթականների թիւը 32,000-ից չէ անցնում, այդ պահանջը կրճատուում է կիսով չափ:

Նահանգական կոմիտէն մինչև այսօր ստացել է 50,000 ուրբլի, որից 26 հազարը ծախսուած է, 24 հազարը մնում է: Ծախսուած 26 հազարով ալիւր է բաժանուած Երևանի գաւառի բոլոր գաղթականներին, առանց ազգի խտրութեան, շնչին 1 փութ և բացի դրանից որոշ գումար ուղարկուած է Նախիջևան ներսէս եպիսկոպոսին Նախիջևան և Շարուրի գաւառներում տեղաւորուած գաղթականների համար:

Յանձնաժողովին ներկայացուցիչների առաջարկով Մարտ ամսուայ համար խնդրուած է թիֆլիզից 57 հազար ուրբլի և որոշուած է Մարտ ամսին Պետական նպաստով Երևանի նահանգի գաղթականներին, բացի վաղարշապատի գաւառի և Երևան քաղաքի գաղթականներից, տալ շնչին $1\frac{1}{2}$ ֆ. ալիւր, 3 կոպ. դրամ օրական և $\frac{1}{4}$ ֆունտ սապոն ամսական: Յանձնաժողովս յոյս ունի, որ բռնած ընթացքով հնարաւոր կլինի ստեղծել և ցանկալի դրութիւն ու համեմաշխ դործունէութիւն:

Որոշ փափկանկատութիւն թոյլ չէր տալիս յանձնաժողովիս մանաւանդ Երևանի գաւառի գաղթականների դրութեան բարեփոխման աւելի շուտ անել և այդ խնդիրն է պատճառը, որ նպաստները բաշխուած սկսուեց միայն Փետրուարի 2-ին:

Պետական նպաստով գնուած ալիւրի մատակարարումը կատարուում է նոյնպէս մեր շրջանային մարմինների ձեռքով, մի մասի դրամը ուղարկում է յանձնաժողովիս նախագահին, որը առանց Ղամարլուի շրջանային մարմնի մասնակցութեան իրաւունք չունի որ և է քայլ անելու:

Գալով Նախիջևանի և Շարուրի գաւառների գաղթականներին տրուելիք նպաստին պէտք է ասել, որ շնորհիւ յանձնաժողովիս ներկայացուցիչների է հղել, որ այդ գաւառների գաղթականների կարիքները հոգալու դրամը ուղարկում է ներսէս եպիսկոպոսին: Եւ վերջին ժողովում ևս խօսուել է, որ էջմիածնի գաւառի գաղթականների կարիքները հոգալու հարկաւոր դրամը ուղար-

կուելու է Ս. էջմիածնի կարգադիր մարմին:

Նահանգական կոմիտէտի անունով ստացւող հազուատեղէնը բաժանուած է այն ձևով դարձեալ մեր մարմինների մասնակցութեամբ:

Յանձնաժողովս աւելորդ է համարում Նահանգական կոմիտէտում դրուած բոլոր խնդիրները այստեղ յիշել, կարող ենք միայն ասել, որ այստեղ դործերը ընթանում են համաձայն մեր ցանկութեան: Յանկալի է շեշտել նաև այն հանգամանքը, որ կոմիտէտը և մասնաւորապէս Նահանգապետը շատ լաւ տրամադրուած է դէպի հայ գաղթականները, իսկ դէպի ասորիները առհասարակ տրամադրութիւնը վատ է շնորհիւ նրանց վատութեան:

Պ Ա. Հ Ե Ս Տ.

Գաղթականութեան հոսանքը դեռ չը սկսուած Երևանում քաղաքացիներից հաւաքուեց մեծ քանակութեամբ հազուատեղէն և տեղաւորուեց առաջնորդարանի ծայրի երեք սենեակներում, որպիսի սենեակները մինչև այսօր էլ ծառայում են որպէս պահեստ և այնտեղից հազուատ է բաժանուում գաղթականներին: Բացի դրանից ստացած հազուատեղէններից Երևանի տիկնանց կոմիտէտը քաղաքային վարչութեան ազատ սենեակներում անընդհատ պատրաստում էր վերմակներ, դոշակի երեսներ, հազուատներ, սպիտակեղէն կայլն, որ հետզհետէ ուղարկուում էր պահեստ: Պահեստում բացի տեղում պատրաստուած հազուատեղէնից ստացուած են.

1. Թիֆ. վարկ ընկ. մի արկղ հազուատեղէն.
2. Բագուից . 2 վագոն »
3. Ձեմակի միութիւնից 6 ֆուրգոն »
4. Ձեմակի միութիւնից 800 կտոր »
5. Մոսկուայի հայկական կոմիտէտից 22 հակ
6. » » » 2000 ու. կտորեղէն
7. Սամարղանդի հայ հաս. 12 հակ հազուատ
8. Աստրախանի հայ հաս. 1 վագոն հազուատ
9. Կիևից մի քանի անձ. 1 կապ. հազուատ
10. » Ս. Եղիազարեանից 82 զոյգ չուստ
11. Սիմֆերոպոլից 18 կապ. հազուատ
12. Կիսլավոդսկից 4 կապ հազուատ

Պահեստի կառավարութիւնը իր վրայ վերցրել էր յօժարակամ տիկ Աշիւ. Մուսինեանը, որը օր. Տէր Թադէոսեանի օգնութեամբ, համաձայն տուած տոմսերի, հազուատներ էր բաժանում գաղթականներին: Երբ փետրուարի սկզբից տիկին Մուսինեանը իր վրայ վերցրեց հիւանդանոցի բարեկարգութեան գործը—նորան պահեստում փոխարինեց տիկին Վ. Աթանասեանը: Դժբախտաբար տիկ. Աթանասեանը վարակուել է տիֆով:

և անյուսալի հիւանդ է: Հիւանդացի է տիֆով նաև օր. Տէր Թադէոսեանը: Պահեստը այժմ կառավարում է դարձեալ տիկ Մուսինեանը:

Ձեկուցմանը կցած ցուցակից երևում է, որ Յունկար և Փետրուար ամիսներում բաժանուած է գաղթականներին 31,164 կտոր հազուատեղէն:

Ենթադրելով, որ շատ անգամ մոռացմամբ չէ մոռնում մատեան տրուած հազուատեղէնը: Կարելի է ասել, որ բաժանուած հազուատեղէնը 40,000 կտորից շատ պէտք է լինի:

Սոյն զեկուցմանը կցուած է նաև Ղրամարկի հաշիւը:

Երևանի եղբայրական օգնութեան նախագահ՝ Խորէն Եպիսկոպոս

Անդամներ { Մ. Մուսինեան
Գ. Տէր Խաչատրեան

Գ.

ՀԱՄԱՊԱՏՈՒՄԻ ԶԵՆՈՒՅՈՒՄՆ Զ. ՆԱԽԻՋԵՆԻՍԻ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Երբ 1914 թուի Դեկտեմբերի 25-ից սկսած՝ Պարսկաստանի Հայ և Ասորի փախստական գաղթականութեան մասնակի բնոյթ կրող հոսանքը՝ տեղի տուեց անսպասելի, խուռն հոսանքի, այն ժամանակ մեր Հին Նախիջևանում գոյութիւն ունեցող զուտ ազգայնական բնոյթ կրող յանձնախումբը, որ կազմուած էր օժանդակութիւն հասցնելու պատերազմի դաշտում փաստաւորների ընտանեաց և յատկապէս հայ կամաւորների օգնութեան՝ ստացաւ ընդհանուր բնոյթ այսպէս:

Դեկտեմբերի 28-ին Երևանի Փոխ-Նահանգապետի ներկայութեամբ՝ մեր յանձնախումբը հրաւիրուած է իւր մէջ ընդունելու քաղաքի պաշտօնական բաժնի դասակարգի մասնակցութիւնը: Որով՝ Փոխ-Նահանգապետի կողմից հրաւիրուած եր՝ Պ. Ա. գաւառապետը, հարկային տեսուչը երեք հաշտարար միջնորդները և քաղաքագլուխը՝ վարելու եղբայրական օգնութեան սրբազան գործը իմ նախագահութեամբ՝ մեր ազգայնական յանձնախմբի քարտուղարով և գանձապահով, որպիսին չկորցրեց իւր նախկին իրաւասութիւնը և գործելակերպի եղանակը՝ մնալով դարձեալ Նորին Վեհափառութեան հովանին վայելող յանձնախումբը, որովհետեւ՝ նոր կոմիտէն՝ ինքն ըստ ինքեան հանդիսացաւ հնի ընդլայնում և ոչ այլ ինչ:

Հաւաստիանալով Զուլֆայում կուտակուած փախստական գաղթականութեան դառն վիճակին և սոսկալի կացութեան, Դեկտեմբերի 29-ին մեր յանձնախմբի ներկայացուցչութիւնը Փոխ Նահանգապետի հետ ի միասին աճապարեց դէպի Զուլֆա, ուր արդէն Ատրպատականի հայոց առաջնորդ Ներսէս եպիսկոպոսը Պ. Ա. Շառաֆեանի անձնուէր գործակցութեամբ ձեռնարկել էր գաղթականութեան ասպնջականելու և հնարաւոր եղածին չափ անուցանելու և պատասխարելու գործը, որպիսի տառապանաց օրերում ոչ փոքր զօրովիճ հանդիսացաւ շրջակայ գիւղերի հայ բնակչութիւնը՝ հազարաւոր փթերով պատրաստի հաց իրենց սայլերով բերեց և թափեց Զուլֆայի անունը՝ սովալլուել, ցրտահար հայ և ասոր չուառ գաղ-

թականութեան, հարկաւ միանգամայն ձրիարար: Մենք առ տեղեւան հաւաստիանալով տիրող հրատապ անտանելի վիճակին՝ վերադարձանք խորհելու և ձեռնարկելու դրանց ընդունելութեան և պատասխարման գործին Նախիջևանում:

Եւ արդարեւ, տարւոյս Յունուարի 3-ից բացուեց գաղթականութեան հոսանքի սկիզբը դէպի Նախիջևան, ուր անհնար գտնելով բւերաւոր գաղթականութեան պատասխարումն Նախիջևանում որոշեց անմիջապէս ձեռնարկելու ի մասնաւորի հայ գաղթականութեան բաժանումն հայաբնակ գիւղերն, և չորս օրուայ ընթացքում 7000-ից աւելի գաղթականութիւնը՝ և հայ թուրք ազգաբնակչութեան՝ սայլերով, գրաստներով՝ գիշեր և ցորեկ փոխադրուեց յիսնաչափ գիւղերի վրայ, որով միայն հնարաւորութիւն ունեցաւ ընդունելու և անուցանելու տան հազարից աւելի մերկանդամ—ցրտահար ասորի գաղթականութիւնը մօտաւորապէս երկու շաբաթ՝ մինչև նրանց փոխադրութեան գործը, այս ամենի ժամանակ մեզ աջակից էր ինքը քաղաքական իշխանութիւնը:

Սրանց այդ արկածալի տխուր օրերի պահպանութեան գործը՝ հոգացուեց Պ. Պապաջանեանի ձեռքով իմ տրամադրութեան ներքոյ գրուած 6000—բուրլով և Երևանի եղբայրական օգնութեան 500—բուրլով, որպիսի գումարը գործադրում էր յանձնախմբից ընտրուած գործադիր մարմնի ձեռքով մեր հսկողութեամբ: 6000—բուրլի գումարի 3000-ը պատկանում էր իշխանուէրի վաւական զեմսկի սոյիւղին: Որպիսի գումարից մի հազար բուրլին յանձնեցի ասորի Երոմանալի Գրեգորի գործադրութեան նոյն նպատակով, իսկ 500—Ներսէս եպիսկոպոսին դարձեալ նոյն նպատակով: Ներսէս Սրբազանի գործադրութեան, ըստ նախկին հրահանգութեան Պ. Պապաջանեանի: Իսկ մեր ընդհանուր ստացուած մուտքի գումարը հետեւեալն է, որի մէջ մտնում է և վերոյիշեալը, որպիսի գումարի մեծագոյն մասը ստացել է Ներսէս եպիսկոպոսը և գործադիր է

համապատշաճ յանձնողականաւ և ստացողականով մինչև փետրուարի 20:

Թիֆլիսի հայոց կենդրոնական կոմիտէից 3000—բուրլի. Կոմսուէրի վարանցով—Դաշկովայից 5000—բուրլի (ի բաց առեալ ասորի իերոմանալին տուած 1000—բուրլի) Զեմսկի սոյիւղից 7000 բուր.

Երևանի նահանգապետից 1400 բուրլի և մի վազոն ալիւր Կովկասեան կենդրոնական կոմիտէի լիազօրից՝ Պ. Ա. Պաւլովից 1000 բուրլի, Վեհափառ Կաթողիկոսից Մատթէոս սրբազանի միջոցաւ 5000—բուրլի:

Բագուի հայոց կոմիտէից 5,300 ո:

Մոսկւայից տիկին Յակոբեանից 1500 բուրլի:

Երևանի եղբայրական օգնութեան կոմիտէից Պ. Լևոն Մուշեղեանի ձեռքով 500 բուրլի:

Թիֆլիսի պարսկահայոց միութիւնից 750 բ.

Ընդամենը՝ 30,975. բուրլի. որից 16,000-ը ստացուել է հասարակական հիմնարկութիւններից, իսկ 14,975 ո. Զեմսկի սայլից, Կոմսուէրուց և պատերազմի ֆրասուածների օգնող Կովկասեան գլխաւոր կոմիտէից:

Այս ամենի հետ չպիտի մոռանալ և հայ ազգաբնակչութեան հասցրած կենցաղային ամենատեսակ օգնութիւնը՝ որ 50000-ից աւելի կարելի է հաշուել, որն մինչև այսօր դարձեալ չի խնայում իւր աղքատութիւնից բաժին հանել մարդասիրաբար ողորմելի թշուառներին՝ առանց ազգի և կրօնի խտրութեան գաղթականութեան:

Իսկ Փետրուարի 20-ից սկսած՝ ստացուել է 3000—բուրլի փոխարքայից, մի հազար բուրլի պարսկահայ գաղթականութեան միութիւնից, մի հազար լիազօր Պ. Պաւլովից, ստացուելու է Տէր Նահանգապետից 5000 բ., Նորին Վեհափառութիւնից 5000 բուրլի:

Ստացուած է Բագուից Ներսէս սրբազանի անունով մի վազոն ալիւր, ստացուած է իմ անունով Թիֆլիսի Վարկի Ընկերութեան միջոցաւ Նոր Նախիջևանից մի վազոն ալիւր: Ստացուած է բազմաթիւ սպիտակեղէն և հանդերձեղէն զանազան հիմնարկութիւններից՝ Ներսէս եպիսկոպոսի և մասամբ իմ անունով: Իմ տրամադրութեան ներքոյ գրուած՝ թէ ալիւրներն և թէ հանդերձեղէնները՝ ի դէպ յանձնուած է իմ կողմից Ներսէս եպիսկոպոսի բարեհաճ տնօրէնութեան, որպէս ծանօթի և պատասխանատուի և առաջնորդի գաղթական պարսկահայոց:

Ի նկատի առնելով և գաղթականութեան առողջապահական կացութիւնը՝ քաղաքային վար-

չութիւնը յանձին Տէր Նահանգապետի և լիազօր Պաւլովի՝ իդէպ բաց արեց Նախիջևանում բժշկապետ Պ. Բայկի ցուցմունքով մի հիւանդանոց 50 մահակալով, սակայն քիչ յետոյ տեսնելով համեմատաբար տեղի ունեցած ծախքի քանակը և հիւանդների անհամեմատ փոքրաթիւ լինելն, խընդրուեց Պ. Նահանգապետից փակել հիւանդանոցն և բաւականաւ բժշկական պունկտերով, սակայն՝ պատասխանուեց, շարունակել և սպասել իւր տնօրէնութեան: Հիւանդանոցի բժշկական ծախքն և դեղօրայքը տալիս է ինքը Կարմիր Սաշի ընկերութիւնը, իսկ տնտեսական ծախքն մեր կոմիտէն:

Բացուած են բժշկական կայաններ՝ Զահուում և Ապրակունիսում իւր շրջակայ հիւանդների համար՝ մի—մի ֆէլդեր:

Մեր կոմիտէի կողմից հրաւիրուել են բժիշկներ՝ Պ. Վահան Գէորգեան, նրա բացակայութեանը հրաւիրուեց Պ. Աւետիս Տէր Յովհաննէսեանը, Բագուից ուղարկուած է բժիշկ Արամ Աւետիսեանը մի ֆելդերով և մանկաբարձուհով. Մանկաբարձուհին վերադարձուեց՝ պէտք չլինելու պատճառով՝ այն է կարիք չզգացուելով մանկաբարձուհու:

Իւրաքանչիւր մի գաղթականութեան վայր ունի վեց հոգուց բաղկացած ենթակոմիտէ՝ քահանայից, տանուտէրից և գաղթականութեան և տեղային անդամներից կազմուած, որոնք ստանում են նպաստներ պարբերաբար՝ բաժանելու գաղթականութեան:

Գաղթականութեան առօրեայ անդեան համար տրուում է 1½ ֆունտ ալիւր, կամ երկու ֆունտ հաց, շատ փոքր քանակութեամբ թէյ և շաքար, նոյպէս և հիւանդների համար: Փետրուարի 20-ից սկսած գաղթականութեան աշխատաւոր անձինքները՝ օրեկան միջին թուով յիսունչափ մարդիկ՝ անցնում են դէպի պարսկաստան:

Գաղթականութեան գործում. յատկապէս շնորհակալութեան արժանի են՝ Բագուի ներկայացուցիչ Պ. Ա. Պապեանն և Թիֆլիսի պարսկահայոց ներկայացուցիչ Պ. Յարութիւնեանցն և տեղի ուսուցչական խումբն և Նախիջևանի գործադիր մարմնի անդամներն, յատկապէս Պ. Հայրապետ Ծատուրեանցն, որ ահա՝ չորրորդ ամիսն է, որ իւր կալուածքի մէջ գտնուած տներում պատասխարում, կերակրում հազցնում հարիւրի մօտ հայ և ասորի գաղթականութիւն՝ իւր սեպական հաշուով և ծախքով:

Փոխանորդ Հնոյն Նախիջևանի՝ Սիօն վարդապետ:

Դ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՆԱՄԼՈՂ ՍԵԿՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՆԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ.

Ալեքսանդրապոլում փախստականներին խնամելու գործը սկսվել է Նոյեմբերի 5-ից: Սկզբում եկել էին շատ սահմանափակ թվով գաղթականներ: Գաղթականներին խնամելու գործը յանձնուած է մի առանձին սեկցիայի, ընտրւած յանձնաժողովի կողմից, որը կրում է «Եղբայրական օգնութեան կոմիտէ» անունը և գտնւում է Վեհափառի հովանաւորութեան տակ: Թէ յանձնաժողովը և թէ սեկցիան գաղթականներին խնամելու գործում առաջնորդւել են հետեւեալ սկզբունքային որոշումներով՝ 1) Հըաւոր փախստականների համար ունենալ պատրաստի բնակարան, որպէս զի գալուն պէս տեղաւորուեն, գործ չմնան ցուրտ ձմեռանը: 2) Բանակցութեան մէջ մտնել կենդրոնական և հարեան կոմիտէների հետ և աշխատել մի օրինակութիւն ստեղծել գաղթականներին խնամելու գործում: 3) Որպէսզի ձրիակերութեան չսովորեն, աշխատաւորների համար յարմար գործ գտնել: 4) Աշխատել գաղթականներին տեղաւորել գաւառի ապահով գիւղերը: 5) Փախստականներին պահել մօտիկ վայրերում, որպէս զի բարեյաջող պայմաններում նորից վերադառնան իրանց երկրները: 6) Առանձին ուշադրութիւն դարձնել մաքրութեան և առողջապահական և սանիտարական մասի վերայ: հրաւիրելով բժիշկներ ֆելդշերներ: 7) Ստրուկիւն չդնել եկած փախստականների մէջ և խնամել բոլորին հաւասար չափով՝ նշաւ նա Ռուս, Հայ, Վրացի կամ մի ուրիշ ազգութիւնից:

Սկզբում, քանի փախստականները քիչ էին, փախստականները խնամւում էին տեղական միջոցներով. ամսական կամաւոր վճարներով և ուրիշ նւէրներով, բայց երբ շատացան, ստիպւած գիմեցինք դրսի օգնութեան. հետզհետէ աւելանալով գաղթականների թիւը Ալեքսանդրապոլի գաւառում, չհաշուած Ղարաբաղի շրջանը. փետրւարի 1-ին գտնւում էին 1002 ընտանիք, բաղկացած 5937 հոգուց, որոնցից 3159-ը քաղաքում, իսկ մնացածը գիւղերում: Բացի դրանից ամեն օր գալիս էին նորերը և սպասւում է մեծ

քանակով Սուրմալայ գաւառը ապաստանած գաղթականներից, որոնց մասին գրել էր Նահանգապետը: Քաղաքում գտնւում և խնամւում են ուսանիւր 33 հոգի. հայեր—1933 հ., յոյներ 1112 հ., ասորիներ 62 հ., հրէաներ—6 հ., վրացի 5, աստիւն 3, լեհացի 5, եաղուբի 1, գաւառում—հայեր 1840 հ., յոյներ—889 հ., ասորիներ 6, եաղուբի 44, իսկ ներկայիս գաղթականների թիւը հասնում է 6500 հոգու: Փախստականներ կան ուսանալատակ, տաճկահայտակ և պարսկահայտակ. եկած Օլթւայ, Սարիզամիշի, Արդահանու, Արդւինի շրջաններից, տաճկաստանից և պարստանից: Եղել է միօրեայ ցուցակագրութիւն յունւարի 30-ին: Ալեքսանդրապոլ քաղաքում 15 հանրակացարաններում ապրողներին տրւում է շոր, ոտնաման, բնակարան, վառելիք, լուսաւորութիւն, տաք ջուր, 2 ֆ. հաց օրական և մանր ծախսերի համար շաբաթական 20-ական կոպ. իւրաքանչիւրին: Մասնաւոր տներում ապրողներին տրւում է շորեր և ամեն մէկին օրական տասը կոպ. հացի փող: Գիւղերում ապրողներին, բացի գիւղական օգնութիւնից, տրւում է ոտնաման, շորեր, և շաբաթական 35 կոպ. փող անհատին: Բացւած է քաղաքում գաղթականների համար հիւանդանոց, որտեղ կայ երեսուն մահճակալ և որտեղ ընդունւում են երթեկ հիւանդ: Սկզբներում, քանի ազգիւ կամաւորների Վրդ խումբը ապրում էր Ալեքսանդրապոլում, նրա սանիտարական խումբը հսկում էր հանրակացարանների և առհասարակ գաղթականների առողջապահական և սանիտարական մասի վրայ: Հիւանդանոցն ունի մի բժիշկ և մի ֆելդշեր:

Ստացւած է նպաստներ Հայոց կաթողիկոսի տրամադրութեան տակ գտնւող գումարներից

2) Կովկասեան Գլխաւոր կոմիտէի գումարներից կոմսուհի Վարանցովա Դաշկովայի կաթողութեամբ 5000 ո.
3) Ղարսի Նահանգապետի միջոցաւ նոյն գումարներից 3000 ո.

4) Զեմսկի Սօխզից Պ. Պապաշանեանի միջոցաւ 2500 ո.
5) Կովկասի Գլխաւոր կոմիտէից Պ. Ս. Յարութիւնեանի միջոցաւ 2000 ո.
6) Բազւի ազգային Բիւրոյից Պ. Երւանդ Թաղիանոսեանի միջոցաւ 1200 ո.
7) Նոյն գումարներից Պ. Ղուկասեանի միջոցաւ 2000 ո.
7) Երեւանու Նահանգապետից 1000 ո.
9) Երեկոյթից և մասնաւոր դրսից եկած նւէրներից 652 ո. 20 կ.
Տեղական միջոցներից չորս ամսուայ ընթացքում 4800 ո.: Այդ բոլոր գումարները ծախսւել է և այժմ կասսայում մնում է մօտ 5000 ո., որպիսի գումարը այնքան չնչին է համեմատած ծախսերին, որ եթէ մօտ ապագայում դրսից օգնութեան չհասնեն, յանձնաժողովը կընկնի անելանելի դրութեան մէջ: Ալեքսանդրապոլում և նրա շրջանի գիւղերում ապաստանած գաղթականներին խնամելու գործը տարւում է հետեւեալ ձևով: Քաղաքում կան 15 հանրակացարաններ. իւրաքանչիւր հանրակացարան ունի երկուական կամ երեքական վերակացուներ—ուսուցիչ-ուսուցչուհիներ և տեղական երիտասարդ ոյժերից, որոնք հսկում են շինութեան միջի ապրող գաղթականներին, բաժանում են նպաստները, պահում են օրագրական ստատիստիքական տեղեկութիւններ և առհասարակ վերահասու են լինում իրանց խնամքին յանձնւած բնակարանների անց ու դարձի և ապրողների նիստ ու կացի վրայ: Գիւղերը ու-

նին իրանց տեղական կոմիտէները և շրջիկ լիազօրներ յանձնաժողովի կողմից, որոնց ղեկավարութեամբ և ցուցմունքներով գիւղերում գաղթականներին խնամում են տեղական կոմիտէները, գործադրելով տեղական միջոցները և յանձնաժողովի տւած նպաստները: Այս բոլորից յետոյ Ալեքսանդրապոլի գաղթականներին խնամող Յանձնաժողովի կարծիքով. նիւթական սուղ միջոցների պատճառով, գաղթականներին խնամելու գործը դեռ չի հասցրած գոնէ միւսմալ աստիճանի՝ 1) փողով տրւելիք նպաստը թէ քաղաքում և թէ գիւղերում շատ չնչին է. 2) հանրակացարաններում, բնակարան չլինելու պատճառով, խիտ են բնակեցրած. 3) կարիք է զգացւում շաբաթ մի կամ երկու անգամ տաք կերակուր բաժանելու. 4) զգացւում է անկողինների, ոտնամանների, շորերի մեծ պակասութիւն: 5) Մի բժիշկը շատ քիչ է. 6) Շուտով անհրաժեշտ կլինի հնարելու միջոցներ փախստականներին իրանց երկրը վերադարձնելու և կարգի բերելու նրանց քայքայւած տնտեսական դրութիւնը, որի համար եթէ հաշւենք մի ընտանիքին միջին թւով ամենաքիչը 300 ուր., կստացւի 1002 ընտ. 300600 ուրբի:

Ստացւած փողային նպաստները՝ համեմատած քաղաքում և գիւղերում ապաստանած փախստականներին տրւած նպաստների և խնամքի հետ՝ շատ չնչին մասն են կազմում: Մնացած մասը խնամքի ընկնում է թէ քաղաքում և թէ գիւղերում տեղական բնակչութեան վրայ:

Ալեքսանդրապոլի շրջանի պատգամաւոր՝ Ս. Թաբաղեանց:

Ե.

Ի ԳԻՆԻՐԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Գիւղերի անուններ.	Գաղթել էն թէ ոչ.	Թալանուէլ են թէ ոչ.	Կոտորուէլ են թէ ոչ.	Հարս, աղ- ջիկ գերի տարուած են թէ ոչ.	Տան թիւը.	Քանդուած են տները թէ ոչ.	Յետ դար- ձողներ կան թէ ոչ.
-------------------	---------------------	------------------------	------------------------	---	-----------	--------------------------------	-------------------------------------

I ԲԱՅԱԶԻԴԻ ՇՐՋԱՆ

1. Բայազիդ	Գաղթ.	Չեն թալ.	3 տղամ.	Ոչ	280 (600 ք.)	Մասամբ	30—40 տուն
2. Մէյրաման	Չեն գաղթ.	»	Ոչ	»	15 (25 ք.)	Ոչ	—
3. Արծափ	Գաղթ.	»	»	»	125	25 տ. ք.	Բոլորը
4. Քորուն	»	»	»	»	40 (30 ք.)	Ոչ	»
5. Մուսուն	»	»	»	»	60	»	»

II ՈՒՉ ՔԻԼԻՍԻ ՇՐՋԱՆ

6. Դիադին	»	»	»	»	15 (300 (թ. և ք.))	Բոլորը.	Ոչ
7. Ուշ Քիլիսա (վանքի գիւղ)	»	»	»	»	25	Մասամբ	»
8. Դուսմիկաւճախ	»	»	»	»	50	Ոչ	Կէսը
9. Դարա-Բազար	»	»	»	»	30 (30 ք.)	»	Բոլորը
10. Սէյդօ	»	»	»	»	8 (2 ք.)	»	Տղամար- դիկ
11. Զուշան	»	»	25 տղամ. կին, երեխ.	»	(60 15 ք.)	»	Բոլորը
12. Միւրզաջան	»	»	Ոչ	»	15 (40 ք.)	»	Ոչ
13. Թաւլա	»	»	»	»	3 (30 ք.)	»	Ոչ

III ՂԱՐԱՔԻԼԻՍԻ ՇՐՋԱՆ

14. Դարաքիլիսա	»	Թալան.	8 հոգի.	»	340 (1500 (թ. ք.))	Մասամբ	»
15. Տաշի-Հայ	»	Չեն թալ.	Ոչ	»	10 (100 տ.)	Մասամբ	»
16. Զիւրօ	»	մասամբ թալան.	»	»	15 (20 ք.)	Ոչ	»
17. Դադի	»	Թալան.	8 հոգի.	3 հոգի	50	Բոլորովին	»
18. Եօնջալու	»	»	3 հոգի.	Ոչ	120	Բոլորովին	Քիչ
19. Մանգասար	»	Մասամբ	Ոչ	Ոչ	90	Ոչ	»

Գիւղերի անուններ	Գաղթել էն թէ ոչ.	Թալանուէլ են թէ ոչ.	Կոտորուէլ են թէ ոչ.	Հարս, աղ- ջիկ գերի տարած են թէ ոչ.	Տան թիւը.	Քանդուած են տները թէ ոչ.	Յետ դար- ձողներ կան թէ ոչ.
20 Մազրէ	Գաղթ	Մասամբ	Ոչ	Ոչ	60	Ոչ	Քիչ
21 Խըզը	»	»	260	»	15 (22 ք.)	»	»
22 Քոփ-Ղան	»	»	Ոչ	»	7 (20 ք.)	»	»
23 Իրիցու գիւղ Դարաքիլիսա	»	»	»	»	55	Մասամբ	»
24 Հաջի Սաֆար	»	Այո	»	»	18 (22 ք.)	Ոչ	360
25 Աշխալա	»	»	5	3—4	29 (40 ք.)	»	Ոչ
26 Աղա—Դիվէ	»	»	10—15 տ.	6	15 (70 ք.)	»	»

IV ԱԼԱՇԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

27 Ալաշկերտ	»	Այո	300 կց 30 տ. է աղատուէլ	Տարեկ են	300 (600 թ. և ք.)	Մեծ մասը	»
28 Խաչու	»	»	Մասամբ	Ոչ	100	Ոչ	»
29 Ամադ	»	»	75 հոգի	28 հոգի	120	»	»
30 Իրիցու գիւղ Ալաշկերտու	»	»	Ոչ	Ոչ	70 կաթ. և լուսաւորչ.	»	»
31 Դալարեկ	»	»	»	»	40	»	»
32 Զիկանի	»	»	»	»	60	Բոլորը	Քիչ
33 Խոշեան	»	»	30—35 տ.	Տարեկ են	35 (30 ք.)	»	Ոչ
34 Եախնի-Թափէ (Բլուր)	»	»	2 հոգի	Ոչ	110	Ոչ	Քիչ
35 Խաստուր	»	»	Ոչ	»	60 լուս. 70 կաթ. (10 ք.)	»	Ոչ
36 Զեդկան	»	»	70 տ. կո- տորուէլ են	Տարեկ են	70	Բոլորը	»
37 Մուլա-Սուլէյման	»	»	150 տ. կո- տորուէլ են	»	20 լուս. 130 կաթ. յիկ	Ոչ (?)	»

V ԴՈՒԹԱՆԻ ՇՐՋԱՆ

38 Դուլթախ	Գաղթ.	»	14 հոգի	Ոչ	18 (300 թ.)	Բոլորը	»
39 Քօշք	»	»	Ոչ	»	28 (40 ք.)	»	»
40 Մլան	»	»	»	»	18 (40 ք.)	»	»
41 Ասմար	»	»	»	»	7 (46-50 ք.)	»	»
42 Դիւրեկ	»	»	»	»	15 (20 ք.)	»	»
43 Մուլա-Հասան	»	»	»	»	12 (40 ք.)	»	»

Գիւղերի անունները.	Գաղթել են թէ ոչ.	Թալանուել են թէ ոչ.	Կոտորուել են թէ ոչ.	Հարս աղ- ջիկ տա- րել են թէ ոչ.	Տներ թիւը.	Տները քանդուած են թէ ոչ.	Յետ դար- ձողներ կան թէ ոչ.
44 Ղարաշա	Գաղթ	Այո	Ոչ	Ոչ	15 (8 ք.)	Ոչ	Ոչ
45 Մախսուտ Բէյի գիւղը՝ Բաղօ	»	»	»	»	9 (50 ք.)	»	»

Ալաշկերտից, Զեդեանից և Մուլա Սուլէյմանից տարել են մօտ 500 հարս, աղջիկ և 7—10 տարեկան տղաներ:

46 Երանոս	Վերականգնողական ջանքեր	Գաղթել են	Այո	Ոչ	Ոչ	12—15	Ոչ	Ոչ
47 Ղազարայ գիւղ		»	»	35 հոգի	6	4	»	»
48 Բըզըխանայ		»	»	4	3	4	»	»
49 Ղարասու Ալաշկերտի շրջան		Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	15—20	Ոչ	—
50 Զամիան		Այո	»	»	»	5	»	Ոչ
51 Դավոյի գիւղ		»	»	»	»	5	»	»
52 Գարըսա (Ալաշկ. շրջան)		»	»	»	»	4	»	»
53 Զամըսու (Ղարաքի շրջան)		»	»	»	»	7	»	Մասամբ
54 Մի 3-4 տից գիւղ, որի անունը անյայտ մնաց մեղ խ. Ծ.		—	—	—	—	—	—	—

1) Սէյդօ, Միրզաշան, Թալլայ, Մլան, Աս- մար, Դերիկ, Մուլա—Հասան և Մախսուտէյի գիւղը—մարապայ են:

2) Թաշլիչայ—Խանութպաններ:

3) Դուրթախ—Խանութպաններ:

4) Աղադելի—մարապայ է:

5) Զեդեան, Մուլա Սուլէյման և Պօշեամ—

թէ և կոտորուած են տղամարդիկ և մնացել են կա- նայք ու երեխաներ, բայց ցանկալի է այդ գիւ- ղերում ցանքս անել, որովհետեւ շատ լաւ հողեր են, վարած են, ցանկալի է որ անցնին քիւրդե- րի ձեռքը: Ցանքսը կարող են անել մարապայ գիւղացիք, բերքի մի մասը տալով որը մնացած երեխաներին, իսկ միւս մասը իրենց:

4 Մարտի 1945 թ. Ա. Էջմիածին.

Վ. Քաջագնունի:

Եւ այսպէս, Բայազէտի, Դիադինի, Ղարա- քիլիսի և Ալաշկերտի շրջաններում գաղթից առաջ եղել են 54 բնակավայր, ուր ապրել են հայեր անխառն և քրդերի և թիւրքերի հետ, այդ բնա- կավայրերից 4-ը քաղաք են՝ Բայազէտ, Դիադին, Ղարաքիլիս և Ալաշկերտ, իսկ մնացած 50-ը —գիւղ:

Այդ բնակավայրերից թալանուել են բոլո- րովին՝ 29-ը—2 քաղաք՝ Ղարաքիլիս և Ալաշ- կերտ և—27 գիւղ:

Թալանուել են մասամբ 6 գիւղ:

Զեն թալանուել 19 բնակավայր՝ երկու քա-

ղաք—Բայազէտ ու Դիադին—և 17 գիւղ: Կոտորած եղել է 18 վայրերում՝ 3 քաղա- քում—Ալաշկերտ, Ղարաքիլիս և մասամբ Բայա- ղէտ. և 15 գիւղերում:

Մեծ կոտորածներ եղել են՝ Ալաշկերտ քա- ղաքում, ուր 300 հայ տնից ազատ են մնացել ողջ միայն 30 տուն, իսկ 270 տան տղամարդիկ և չափահաս տղաներ համարեա բոլորը կոտորւած են, ջահել հարս, մատաղ աղջիկներ և տղաներ պառաւներ, տկարներ և տգիտներ, երկրորդ տեղը բռնում է Մուլա—Սուլէյման գիւղը, Ալաշկերտի

շրջանում, որի 150 լուսաւորչական և կաթոլիկ հայերի տան տղամարդիկ բոլորը կոտորուած են, ջահել կանայք, աղջիկներ և տղաներ տա- րուած են գերի, մնացել են հիւանդ, թոյլ, ծեր կա- նայք և երեխաներ:

Երրորդ տեղը բռնում է Զեդեան գիւղը. Ա- լաշկերտի շրջանում, որ 70 տան տղամարդիկ կոտորուած են, կանայք և աղջիկներ գերի են տարւած:

Չորրորդ տեղը—Պօշեան գիւղն է, նոյնպէս Ալաշկերտի շրջանում, ուր կոտորուած են 30—35 տան տղամարդիկ:

Հինգերորդը՝ Աղա—Դէվէ գիւղն է, Ղարա- քիլիսայի շրջանում, այստեղ կոտորուել են 10—15 տան տղամարդիկ:

Վեցերորդը—Ալաշկերտի Ամադ գիւղը, ուր կոտորուել են 70 տղան տղամարդիկ և այլն:

Եօթերորդը—Զուլան գիւղը Դիադինի շրջա- նում, այստեղ կոտորուել են 25 տղամարդ: Յետոյ երկուսն են մի շարք գիւղեր, ուր կոտորուել են 7, 5, 3, 2 տղամարդիկ:

Միայն Ալաշկերտից, Մուլա Սուլէյման և

Զեդեան գիւղերից գերի են տարել մօտ 500 հարս —աղջիկ: Միւս գիւղերից փախցրել են 20, 15, 12, 5, 4 հոգի:

Վերև յիշուած բնակավայրերի հայերի տնե- րի ընդհանուր թիւն է 2964, սրանից երկու գիւղի տներ—Թուլ 30—չեն գաղթել, մնացած տները համարեա բոլորը գաղթած են:

Գերդաստունը այս կողմերում, շատ քիչ բա- ցառութիւններով, կազմուած է 6-ից մինչև 25— 30 հոգուց, միջին թուով պէտք է ընդունել 10—12 հոգի: Բազմանդամ են այս տեղերի գերդաստուն- ները. նախ՝ նրա համար, որ երկրագործ ժողովուր- դը ապրում է այստեղ բաւականին նահապետական կերպով, մարդկանց անհատականութիւնը՝ բա- ժանման գլխաւոր պատճառը՝ այս տեղերում այն- քան զարգացած է դեռ և անհատականութեան արտայայտուելու ասպարէզը նեղ է: Յետոյ՝ բնա- վայրը, լինելով 4000 ֆուտից մինչև 6000 ֆ. բարձրութեան վրայ, — ներկայացնում է, ինչպէս և Անդրկովկասում, ամենաառողջ շերտը, յետոյ՝ հողը բերրի է և շատ:

Վարդգէս Քաջագնունի:

2.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ

ՀԱՅՈՑ ԿԵՆԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻԱՑԵԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ.

Հայկական կենդրոնական կոմիտեն կազմակերպուել է Սեպտեմբերի 5-ին 1914 թ. պահեստի զինվորների ընտանիքներին և վիրավորներին օգնություն հասցնելու համար: Կազմը բախկացած է եղել Թիֆլիսի և Բագրի ներկայացուցիչներից:

Երբ ծագում է գաղթականական հոսանքը, կենդրոնական կոմիտեն ի նկատի ունենալով, որ գաղթականներին օգնելու գործը միանգամայն համապատասխանում է կոմիտեի գործունեությանը, ցանկալի է համարում, որ բոլոր բարեգործական հիմնարկությունները համախմբուին և իրենց գործունեությունը միացնեն Հայկ. Կենդր. Կոմիտեի գործունեությանը:

Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերությունը և Թիֆլիսի կանանց կոմիտեն համաձայնում են ունենալ միացնել գործունեություն կենդրոնական կոմիտեի հետ և իրենց ներկայացուցիչներով մտնում են վերջինի կազմի մեջ:

Առաջին գաղթականական հոսանքը սկսուելուն պես, իսկոյն և եթ առաջարկում է Ղարսի բարեգործ. ընկեր. ճիւղին ուղարկել մեկին ծանօթանալու գաղթականների դրություն հետ և հասցնելու անմիջական օգնություն. այդ պարտականությունը յանձն է առնում պարոն Զ. Զամբազյանը: Բացի գործերից մի քանի օրից յետոյ ուղարկում է լիազոր այդ կողմերը ցուցակագրելու գաղթականներին, հասցնելու անմիջական օգնություն, ստեղծելու կազմակերպություններ և կազմակերպելու երկարատև օգնություն գործը:

Երբ գաղթականական հոսանքը լայն ծառայ է ստանում, հրաւիրում է կազմի մեջ ներկայացուցիչներ՝ տեղական երկու հայ օրաթերթերից, հեռագրով՝ Մոսկվայից, Պետերբուրգից, Նոր-Նախիջևանից. Եկատերինոպոլից, Թեոդոսիայից և այնպիսի անձնավորություններից, որոնք հնարավորու-

թիւն ունին աջակցելու գաղթականական գործին: Դիմում է հեռագրով ակնաւոր անձանց Մոսկւա, Պետերբուրգ, Նոր-Նախիջևան և այլ տեղեր կազմակերպել հանգանակություն յօգուտ գաղթականների: Նոյն բանի համար հեռագրում է և Բարեգործական ընկերության բոլոր ճիւղերին: Տպում է կոչ կովկասեան և մայրաքաղաքների թերթերում և հրաւիրում է ակնաւոր անձանց երևան գալ մամուլում գաղթականներին օգնելու հարցի վերաբերեալ. նոյն նպատակի համար դիմում է Ամերիկա առաջնորդին, Վենեցիա, Փարիզ և Եգիպտոս պարոն Նուբար-Փաշային. դիմում է տեղական բանկերին իր միջոցներից բաժին հանելու յօգուտ գաղթականների. Վարդանանց տօնի օրը կազմակերպում է մի օրեայ «կարեկցություն» և ողորմածություն օր յօգուտ գաղթականների. գաղթական կանանց աշխատանք տալու համար բացում է լուսացարան. միջոցներ է ձեռք առնում պետական միջոցներից յօգուտ գաղթականների ստանալ նպաստ. դիմում է «Մշակի» խմբագրությունը յօգուտ գաղթականների ժողոված զրամները յանձնել կոմիտեին. ստանում է խմբագրությունից մերժում, այն առարկություններ, որ զրամները յանձնուած են նպաստամատոյցին. «Մշակի» այդ օրինակ վերաբերմունքը յայտարարում է թերթերում և խնդրում նպաստ ուղարկել ուղղակի իր հասցեով. Թիֆլիսում բացում է «մի բաժակ թէյ» յօգուտ գաղթականների, կոմիտեի նախագահ պարոն Ս. Յարութիւնեանը երկու անգամ շրջում է Ղարսի և Ալեքսանդրապոլի շրջանները, իսկ մեկ անգամ դնում է Ախալքալաքի շրջանը անձամբ ծանօթանալու գաղթականներին: Դրություն հետ և հասցնելու օգնություն. նա միաժամանակ լինելով պատերազմից վնասուածներին օգնող կովկասեան կոմիտեի անդամ խոշոր մաս-

նակցութիւն է ունենում, տեղական ոյժերի և գաղթականներին օգնող հայկական մարմինների հետ միասին այդ վայրերում բացած հիւանդանոցների գործում. բացում են հիւանդանոցներ՝ Ղարսում, Ալեքսանդրապոլում, Կաղզանում և Ախալքալաքում: Կենդրոնական կոմիտեն ուղարկել է իր լիազօններին՝ Սարիղամիշ, Ղարս, Ալեքսանդրապոլ, Զուլֆա, Նախիջևան, Արդահան, Մակու և այլ կողմեր, որպէսզի նոքա, որտեղ կան մարմիններ նոցա հետ միասին կազմակերպի օգնություն գործը, իսկ որտեղ չկան մարմիններ, կայացնէ ընտրություն. ուղարկել է մեծ քանակությամբ տաք շորեր, սպիտակեղեն, անկողին, կօշիկներ համարնայ բոլոր վայրերը, որտեղ կան գաղթականներ. ուղարկել է բժիշկներ, ֆելդշերներ և դեղատներ՝ Ղարս, Կաղզան, Սարիղամիշ, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք, Նախիջևան. բացի հանգանակած ահաբեկ քանակությամբ շորերի, որը ուղարկել է զանազան վայրեր բաժանելու գաղթականներին, ունեցել է 4-8000 բուրլի ծախք՝ իսկ մուտք 109000 բուրլի. իր լիազօնների և ճիւղերի օգնութեամբ ցուցակագրել է գաղթականներին և որոշել նոցա կորուստը: Ցուցակագրությունից պարզուել է հետևեալը՝

Գաղթականական հոսանք ունեցել ենք Բեօփր-քոյից ռուսական բանակի ետ նահանջելուց յետոյ I Բասենի հետևեալ վայրերից՝

1) Եաշան	5) Իշխա	9) Գրդաբուլ
2) Իւզվերան	6) Խոսրովերան	10) Ծանծաղ
3) Գոմաձոր	7) Հալանքար	11) Էգեպատ
4) Քէօփր-քոյ	8) Թէղովերան	

Գաղթել են այդ վայրերից ընդամենը 1043 ընտանիք, անդամների թիւը 8518. ար. 3712, իբ. 4446., ծծկ. 360.

Զոհերի թիւը 35. երկրում մնացածները 165. գերի տարուած աղվերաց և կանանց թիւը 30. հիւանդների թիւը 75.

II Երկրորդ ամենաուժեղ և բազմամարդ գաղթականական հոսանքը սկսուել է Սարիղամիշի դէպքերից յետոյ—Աղբակի, Ատրպատականի և Արաղայի հետևեալ վայրերից՝

1) Վար (տան)	12) Փիս	»
2) Հասիստան	13) Ախաբիկ	»
3) Ղոթար	14) Հասանթամրա	»
4) Բաշկալա	15) Աւարիկ	»
5) Ախպակ	16) Թաւրիկ (պարսկ.)	»
6) Երնջան	17) Խոյ	»
7) Բազա	18) Ղալասար	»
8) Սարա	19) Մէյդաւար	»
9) Հերիւան	20) Մահլամ	»
10) Արալ	21) Հաւթան	»
11) Մարգաւեն	22) Իքաղաջ	»

23) Սարգեղ	»	36) Քէօղամէջ	»
24) Խոսրով	»	37) Բարդուղէոս վանք	»
25) Սարնա (պարկ.)	»	38) Ախրխան	»
26) Փայաջուկ	»	39) Բաղլբօ	»
27) Ղալջա	»	40) Վոր	»
28) Դերեջեց	»	41) Դաւրի	»
29) Քէօհնաշահ	»	42) Ղալթաղ	»
30) Ուրմի	»	43) Սալմաստ	»
31) Սանամէր	»	44) Մալքաւա	»
32) Շորաւ	»	45) Խարադոս	»
33) Վարդան (պարս.)	»	46) Քար	»
34) Նախիջևան-թափա	»	47) Սորանա	»
35) Իսալու	»	48) Բէնկերտ	»

Ընդամենը 3360 տուն. ընտանիքի անդամների թիւը 18054. հասակ. ար. 4750՝ իբ. 5340., երեխ. ար. 4568, իբ. 3397:

Զոհերի թիւը 1970, երկրում մնացածների թիւը 721, գերի տարած օրիորդների և կանանց թիւը 230, հիւանդների թիւը 800 մօտ.

III. Ալաշկերտի շրջանի 8 վայրերից, գաղթել են ընդամենը 2500 տուն. ընտանիքի անդամների թիւը 20000. զոհերի թիւը 1200. գերի տարած կանանց և օրդիների թիւը 350. հիւանդների թիւը 600, կան և բժաւոր տիֆով հիւանդներ.

IV Բայազետի շրջանի 5 վայրերից գաղթել են 520 տուն. ընտան. անդամ. թիւը 3640, զոհերի թիւը 8. երկրում մնացածների թիւը 150, հիւանդների թիւը մօտաւորապէս 50—60:

V Ռուսահպատակներից—Արդահանի, Արդուինի, Օլթիի և Արդանուշի շրջաններից գաղթել են 1050 ընտանիք. անդամների թիւը 7500. զոհերի թիւը 1270. երկրում մնացածների թիւը 320—400—գերի տարած օրիորդների և կանանց թիւը 250. հիւանդներինը՝ 350 մօտաւորապէս:

Անհրաժեշտ է շեշտել հետևեալը՝ Աղբակի շրջանի Հերիւանի, Բազի, Արազի, Մարջաւէնի, Խարադանի, Փիսի, Բաշկալի, Արաղայի շրջանի՝ Ախորիկ, Հասանթամրա, Աւարիկ: Օլթիի շրջանի—Արդանուշի և Տանձոտի, Շաւշթի 4 գիւղերի, Ալաշկերտի շրջանի—Ալաշկերտի, Մուլա-Սուլէյմանի, Զեղկանի բնակիչներից տղամարդիկ և ընդհանրապէս արական աշխատաւոր ձեռքերը սկսած 8 տարեկանից բոլորին էլ կոտորել են, ազատուել են որոշ չափով միայն կանայք և երեխաներ. մնացած վայրերից շատերում էլ եղել են մասնակի կոտորածներ:

Որոշելով ամեն մի գծից գաղթած փախուտականների թիւը, այժմ անցնենք նոցա տնտեսական դրութեան հայրենիքում կամ ունեցած կորստին:

I Տաճկական Բասենի 11 գիւղերի բնակիչները ունեցել են՝

ԼձԿ.	Կթան	Ձի և Ա.	Մանր անաս.
5765	4080	411	20895
Ցոր. Գարի, Ալիւր	Սալիւր	Խոտ	Ցանքս ար-
601,117 փ.	3045	871,250 փ.	տացու
			13720 փթի տեղ

II Աղբակի, Ատրպատականի և Աբաղայի գաղթականները ունեցել են՝

ԼձԿ.	Կթան	Ձի և Ա.	Մատ. անաս.
8734	7590	1750	36,150
Ցոր. Գարի, Ալիւր	Խոտ	Ցանքս 60460 փ.	
733,780	621,400	արտացու 160,520	
Գինի, չոր միրգ.	Սալիւր	փթի տեղ	
85,870 փ.	2560		

III Արգահանի, Արգահանի, Արգահանի և Օլթիի գաղթականները ունեցել են՝

ԼձԿ.	Կթան	Ձի և Ա.	Մանր անաս.
5760	4100	485	18,700
Ցոր. Գարի և Ալիւր	Խոտ	Արտացու տեղ	
481,600 փ.	740,400	15500 փթի տեղ	
Սալիւր			1250

Եթէ գնահատենք ամեն մի լձկանը 50 ռ., կթանը 50 ռ., ձի և աւան. 40 ռ., մանր կենդանիները 5 ռ., ցոր. դար. և ալիւր փութը 20 կոպ., ցանքս փութը 1 ռ. 50 կոպ., սալը 25 ռ., գինին և չոր միրգը փութը 3 ռուբ. եթէ ընդունենք, որ ամեն մի ընտանիք ունեցել է 25 ռուբ., գիւղատընտ. գործիքներ—միջին թւով ամեն մի ընտանիքին հասած կահ-կարասիքից և անշարժ կայքից ֆլասը հաւասար է 300 ռուբ., այն ժամանակ I Բասենի գաղթականների կորուստը հաւասար կլինի 1,700000 ռ.:

II Աղբակի, Ատրպատականի և Աբաղայի գաղթականների կորուստը հաւասար կլինի 3,500000 ռ.:

III Արգահանի, Արգահանի, Արգահանի և Օլթիի գաղթականների կորուստը հաւասար կլինի 1,600000 ռ.:

IV Ալաշկերտի գաղթականների, կորուստը ինկատի ունենալով նոյն նորման, կարելի է ընդունել հաւասար 3500000 ռ.:

V Բայազետի կորուստը, ինկատի ունենալով նոյն նորման, կարելի է ընդունել հաւասար մօտաւորապէս 1,000000 ռ.:

Եթէ ընդունենք առետրականների թիւը բոլոր վայրերում հաւասար, մօտաւորապէս 1000-ի և ամեն մէկի ունեցած ապրանքների արժողութիւնը միջին թւով 1500 ռ. կորուստը հաւասար կլինի 1,800000 ռ.:

Բոլոր վայրերի գաղթականները կարողացել են ազատել՝

ԼձԿ.	Կթան	Ձի և աւ.	Մանր անաս.	Սալիւր
960	630	410	1560	210

ինկատի ունենալով և այլ ծախքեր:

Ուրեմն միայն սննդի համար կպահանջուի բաւականին խոշոր գումար. եթէ աչքի առաջ ունենանք և վերադարձի հարցը, որի հետ կապուած է տնտեսութեան վերականգնելու հարցը և այդ հարցի իրագործման համար պահանջուող ծախքերը, որը պէտք է ընդունել հաւասար կամ, գուցէ,

Աղ. Շարաֆեանց:

Եթէ գնահատելու լինենք վերոյիշեալ գնահատութեամբ, կտեսնենք, որ կարողացել են ազատել ոչ աւել քան 100000 ռ. մօտաւորապէս. այստեղ աչքի առաջ է առնուած դրամով ազատուածները: Պէտք է շեշտել, որ ազատած անասուններն էլ համարեա մեծ մասամբ չնչին գնով ծախել են, որովհետեւ պահելու հնարաւորութիւն չեն ունեցել:

Բոլոր գծերից գաղթած փախստականները տեղաւորուել են՝

1) Ղարսի շրջանում	11) Թիֆլիսու շրջանում
2) Կաղզւանի »	12) Մակի խանութեան
3) Սարիղամիշի »	մէջ գտնուող հայկա-
4) Ալէքսանդրապոլի	կան գիւղերում և
5) Երևանի գաւառ	Մակուում
6) Նախիջևանի »	13) Որոշ մասն էլ անցել
7) Էջմիածնի »	է Կովկասի և Ռու-
8) Բայազետի »	սաստանի զանազան
9) Շարուր—Դարալագ.	քաղաքները:
10) Ախալքալակի »	

Ամփոփելով բոլոր գաղթականների վերաբերեալ թւական տեղաւորումը, կտեսնենք հետեւեալը՝

I Գաղթականների թիւը հաւասար է 6473 տան՝ 57,500 հոգի, բայց ընդունելով, որ գաղթականական հոսանքը շարունակուում է, թիւը կարող է հասնել 60000-ի:

II Ձոհների թիւը 4480 կամ 4500 մարդ.

III Գերի տարուած օրիորդաց և կանանց թիւը 860 հոգի:

IV Հայրենիքում մնացածների թիւը 1500-2000 հոգի:

V Գաղթականների կորուստը ընդունուած նորմայով գնահատուած—14,000,000 ռուբ.:

VI 19 գիւղերի բնակիչների տղամարդիկ և ընդհանրապէս բոլոր արական աշխատաւոր ձեռքերը 8-10 տարեկանից սկսած կոտորուել են, ազատուել են միայն կանայք և երեխաներ, իսկ բաւականաչափ գիւղերում եղել են մասնակի կոտորածներ:

VII Տանձտուում 24 կիւն թունաւորուել է, որպէսզի չենթարկուի բռնաբարութեան:

Մի քանի խօսք ևս բերէի մասին:

Եթէ ընդունենք ամեն մի անձի համար սննդի ծախք օրական 15 կոպ.,

Բժշկական և անասունների սննդի համար ամեն մի անձի օրական 5 կոպ.,

Ուրեմն ընդամենը բոլոր ծախքերը օրական ամեն մի անձի համար 20 կոպ.,

Գաղթականների թիւը 57000, այն դէպքում օրական կպահանջուի ծախք 11,400 ռուբլի, ամսական 342000, եթէ ընդունենք, որ նոցա նպաստուել ենք միջինում ոչ պակաս քան 6 ամիս այն դէպքում կպահանջուի 2 1/2—3 միլ. ռուբլի:

Է.

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ» ՀԱՍՑՆՈՂ.
ՄԵԾԱՐԳՈՅ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ.

1914 թ. Սեպտեմբեր ամսից գոյութիւն ունի՝ Ազգային Բիւրօյին կից՝ հայ կանանց կոմիտէն, որը՝ բացի կամաւորներին սպիտակեղէն և այլ հագուստներ հայթայթելու պարտականութիւնից՝ յանձն է առել նաև, իր ոյժերը ներածին չափ՝ գաղթականներին օգնութիւն հասցնելու հոգսը:

Ստորև ներկայացնում ենք կոմիտէի համառօտ հաշիւը փախստականների օգտին կատարած աշխատանքի մասին.

Հանգանակուած է դրամով 2672 ր 72 կ.
Այս գումարից յանձնուած է Կենտր. Կոմիտ. փախստականների կարիքների համար՝ 1309 ր. 86 կ.
Մենքոր եպիսկոպոսին նոյն նպատակի համար 290 ր. 96 կ.
Հայ Գիւղատնտես Ընկ. փախստականների քայքայուած տնտեսութիւնը վերականգնելու համար 600 ր.

Մնացած գումարի մի մասը մնում է առձեռն. — միւսը՝ ծախսուած է փախստականների մանր պէտքերի համար:

Բացի այս հանգանակուած է Թիֆլիսում և ստացուած է գաւառներից և հեռաւոր գաղութներից 77 հակ զանազան հագուստներ և տեղաշորեր:

Այս իրերը բաշխուած են հետևեալ կերպով.	
Ուղարկուած է Իզդիր	10 հակ
» » Սարիղամիշ	12 »
» » Հ. Նախիջևան	35 »
» » Ախալքալաք	20 »
Գումար	77 »

Անկախ սորանից Թիֆլիսի զանազան զբոսայտներում տեղաւորուած փախստականների 300 երեխայից բաժանուած է նոր հագուստ:

Ներկայացնելով վերոյիշեալն ի տեղեկութիւն և յանձնարարելով համագումարի անդամ Պ. Արշակ Թաղէոսեանին վարչութեանդ առաջ թարգման հանդիսանալ մեր ցանկութիւններին, — թոյլ ենք տալիս յուսալու, որ կանանց կոմիտէի համեատ գործունէութիւնը ի նկատի կառնուի և յետագայում՝ փախստականների վերաբերեալ խորհրդակցութիւններին՝ նրան ևս հնարաւորութիւն կտրուի մասնակից լինելու:

Նախագահ՝ Ն. Ղամբարեանց

Քարտուղար՝ Վ. Սահակեան:



Ը.

ՀԱՅՈՑ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՈՐ Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻՑ

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն.

Հայ Նպաստամատոյց Ընկերութիւնը, հրապարակ եկաւ իր հաստատուած կանոնադրութեամբ հայ ժողովրդին պատահած ներկայ ամենամեծ աղէտի օրերին՝ յատուկ նպատակ ունենալով կազմակերպել օգնութեան դործը ժողովրդական այս մեծ աղէտի ժամակ:

Ընդունելով որ այս աղէտի ժամանակ ամենածանր և կարեւոր գործը կայանում է իր հայրենի երկրից Անդրկովկաս փախած մօտ 60 հազար հայ փախստականներին նորից իր երկիրն ու քանդուած օջախը վերադարձնելու գործը. Նպաստամատոյց Ընկերութիւնը, թողնելով գոյութիւն ունեցող միւս հասարակական կազմակերպութիւններին հոգալ փախստականների օգնութեան այլ կարիքները՝ Նպաստամատոյցի վարչութիւնը իր վրայ վերցրեց հայ փախստականների գիւղատնտեսական և տնտեսական վիճակի կարգաւորումը և այդ մեծ գործին ձեռնարկելուց առաջ, նա յատուկ յանձնաժողովի միջոցով մշակեց մի ծրագիր, որով պէտք է ուսումնասիրէր նախ և առաջ կարիքի չափը և ապա թէ ձեռք առնուէին միջոցներ նախ և առաջ հրաւիրելու այս գործի վրայ կառավարութեան ուշադրութիւնը, որպէսզի պետական լայն միջոցներով, որպէս նաև հասարակական նուիրաբերութիւններով, հէնց որ հնար կլինի փախստականներին հայրենիք ուղարկել, զլուխ կանգնել այդ գործին՝ հրաւիրելով գործակցութեան նաև մեր միւս հասարակական կազմակերպութիւններին:

Եւ ահա որպէսզի կարելի լինի ստեղծել տեղումս մի խոշոր, հեղինակաւոր մարմին, որը կարողանար վայելել պետութեան վստահութիւնը, Նպաստամատոյցը յուսաւրի սկզբում զիմեց Թիֆլիզում գտնուած փախստականների գործով զբաղւող հայ կազմակերպութիւններին և նրանց ներկայացուցիչներին հետ ընդունելով համագործակցութեան սկզբունքի ցանկալիութիւնը, որոշեց զիմել նաև էջմիածին՝ Վեհափառ Կաթողիկոսից

խնդրելով, որ Նորին Վեհափառութիւնը մի համագումար հրաւիրի գոյութիւն ունեցող կազմակերպութիւնից, ուր և ոչ միայն մշակուին օգնութեան գործի եղանակներն ու կարիքները, այլ և, որ ամենագլխաւորն է, ստեղծել այդ բոլոր կազմակերպութիւններից մի Բիւրօ, ուր կկենդրոնանային փախստականներին օգնող բոլոր միջոցները և բաժանուէին այդ այն նպատակների համար, որ հետզհետէ կուզենար իրագործել այդ մարմինը համաձայն որոշ ծրագրի:

Բարեբաղդաբար, այս միտքը միաժամանակ ծագել էր նաև էջմիածնի Կենդրոնական Նղբայրական Օգնութեան կոմիտեի մէջ և ահա այս սօրուայ համագումարը Նպաստամատոյց Ընկերութեան իղձերի մի առաջին քայլի իրագործումն է: Փետրուար 25-ի վերջին ընդհանուր ժողովում Նպաստամատոյց Ընկերութիւնը քննելով էջմիածնի համագումարի դրած օրակարգը՝ հանգաւ հետևեալ որոշումներին:

